



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճեննել և տարածել նյութը ցանկացած ձևացափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material


ՅԵ. ՄԻԿՈՒԼԻՆԱ

# ՄԱՍՍԱՆԵՐԻ ՄՐՑՈՒԹՅՈՒՆԸ

Հեղ. ի. ԱՏՎԱԼԻՆԻ առաջարանով

ՊԵՏՈՎԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵԵՐԵՎԱՆ—1929



ՅԵ. ՄԻԿՈՒԼԻՆԱ


331.87C

ՄԱՍՍԱՆԵՐԻ ≡

≡ ՄՐՑՈՒԹՅՈՒՆԸ

~~1646~~  
A  $\frac{I}{4424}$

Հնկ. Ի. ԱՏՎԱԿԻՆԻ առաջարանով



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ, 1920

ՊԵՏՏՐԱՏԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏԹԱՐԱՆ ՅԵՐԵՎԱՆՈՒՄ

Գառզեր № 847 Հ.Բ. № 1049 Տիրաժ 5000 Գրառեպիշտ № 2705 բ.

## Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Հաղիվ թե կարելի լինի կասկածել վոր մեր  
շինարարության ամենակարեռը փաստերից մեկը,  
յեթե վոչ ամենակարեռագույնը, տվյալ մոմենտում  
բանվորների միլիոնավոր մասսաների լայն ծավալվող  
մրցությունն է: Մրցությունն մեր անեղք յերկրի բազ-  
մազան անկյունների ամբողջ ֆարբիկաների և գոր-  
ծալ անների. մրցությունն մեր բանվորների և գոր-  
դացիների մեջ. մրցությունն մեր կոլտնտեսություն-  
ների և խորհունտեսությունների մեջ. ամրապնդում  
այդ մասսայական արտադրական փոխադարձ կանչե-  
րի՝ աշխատավորների հատուկ պայմանագրերի մեջ,—  
այս ամենն այնպիսի փաստեր են, վորոնք կասկածի  
տեղիք չեն տալիս, վոր մասսաների սոցիալիստական  
մրցությունն արդեն իր ուժի մեջ և մտել:

Աշխատավորական մասսաների արտադրական  
հզոր վերելքն սկսվեց:

Այժմ նույնիսկ ամենակատաղի սկեպտիկներն  
անդամ ստիպված են խոստովանել այդ:

«Սոցիալիզմը,—ասում ե Լենինը,—վոչ միայն չի հանդցնում  
մրցությունը, այլ, ընդհակառակն, տուածին անդամ հնարավորու-  
թյուն և ստեղծում կիրառել այն խսկապես լայնորեն, իսկապես  
մասսա այս կանոնը ներս քաշել աշխատավոր մասսաների  
խսկական բազմությունն այնպիսի աշխատանքի ասպարեզ, վոր-  
տեղ նրանք կարող են հայտարերել իրենց, զարգացնել իրենց

ունակությունները, յերեան հանել տաղանդներ, վորոնք ժողովը մեջ զեռ շշոշափված աղբյուլ են, և վորոնց կապիտալիզմը տրորում, ճնշում, խեղդում եր հաղաքաներով ու միլիոններով...

... «Չեռներեցություն, մրցություն, համարձակ նախաձեռնություն հայտաբերելու համար՝ լայն, էրոք մասսայաբար հնարավորություն ստեղծելու ժամանակը հանդիսանում է միայն այժմ... վորովհետեւ ուրիշների համար գարերով աշխատելուց հետո, հարկազբական աշխատանքից հետո՝ շահագործողների համար, — տուաջին անգամն և հնարավորություն ստեղծվում աշխատել ի ը են համար»:

... «Մեր ինդիքն այժմ, յերբ իշխանությունը սոցիալիստական կառավարության ձեռքին և, մրցություն կազմակերպելու եւ:

Լենինի այս դրույթներից եր յելնում Համ կ (ը) կ 16-րդ կոնֆերենցիան, յերբ հատուկ դիմում ուղղեց բանվորներին և աշխատավորներին մրցության մասին:

Միքանի «ընկերներ» բյուրոկրատներից կարծում են, թե մրցությունը բավկահիկների հերթական մոդան եւ և, վորպես արդարին, պետք եւ խեղդվել «սեղոնը» վերջանալուց հետո: «Ընկերները» բյուրոկրատներից, իհարկե, սխալվում են:

Մրցությունն իրոք սոցիալիզմի շինարարության կոմմունիստական մեթոդն եւ աշխատավորների միլիոնավոր մասսաների առավելագույն ակտիվության հիմունքով: Իսկապես, մրցությունն այն լծակն եւ, վորի ոգնությամբ բանվոր դասակարգը կոչված ե յերկը ամբողջ տնտեսական և կուլտուրական կյանքը շուռ տալու սոցիալիզմի բաղակի վրա:

Ուրիշ «ընկերներ» բյուրոկրատիկից, վախեցած մրցության հզոր ալիքից, փորձում են նրա համար արհեստական շրջանակներ ստեղծել, ափերի մեջ ամփոփել, «կենտրոնացնել» մրցության գործը, նեղացնել նրա թափը և արդպիսով զրկել այն ամենակարե-

վորից, ինչ վոր կա նրա մեջ,—մասսաների նախաձեռնությունից:

Ինչ խոսք, վոր բլուրոկրատների հաշիմները չեն արդարանաւ Համենայն դեպս, կուսակցությունը բոլոր միջոցները ձեռք կառնի, վորպեսզի նրանց ջարդությունը անի: Սոցիալիստական մըցությունը դիվանատան գործ չե: Սոցիալիստական մըցությունը մասսաների գործնական հեղափոխութեան ինքնարննադատության արտահայտությունն ե, վոր հենվում ե միլիոնավոր աշխատավորների ստեղծագործական նախաձեռնության վրա: Վորեն մեկը, ով՝ դիտակցաբար կամ անգիտակցաբար՝ ճնշում ե մասսաների ալդ ինքնաքննադատությունը և այդ ստեղծագործական նախաձեռնությունը, պետք ե ճանապարհից դուրս շպրտվի, վորպես արգելակ մեր մեծ գործի:

Բլուրոկրատիզմի յերկյուղը կոնկրետ կերպով նախ և առաջ արտահայտվում ե նրանով, վոր նակաշկանդում ե մասսաների յեռանդը, նախաձեռնությունը և ինքնագործունեյությունը, նա զրվանի տակ ե պահում այն հսկայական պահեստները, վորոնք թաղնված են մեր իրավակարգի ծոցում, բանվոր դասակարգի և գլուղացիության ծոցում, նա չի թույլ տալիս ողտագործելու ալդ պահեստները՝ մեր դասակարգակին թշնամիների դեմ սղվող պայքարում: Սոցիալիստական մըցության խնդիրն ե՝ խորտակել բլուրոկրատական ալդ յերկաթի կապանքները, լայն ասպարեզ բանալ մասսաների յեռանդի և ստեղծագործական նախաձեռնության ծավալման համար, հայտնաբերել մեր իրավակարգի խորքերում թագնված հսկայական պահեստները և դնել նրան կշեռքի նժարը

մեր գասակարդալին ներքին ու արտաքին թշնամիների գեմ մղվող պայքարում:

Սոցիալիստական մըցությունը յերբեմն շփոթում են կոնկուրրենցիայի հետ: Այդ մեծ սխալ և Սոցիալիստական մըցությունն ու կոնկուրրենցիան յերկու միանգամայն տարրեր սկզբունքներ են: Կոնկուրրենցիայի սկզբունքն և վոմանց պարառությունն ու մահը, վոմանց հաղթությունն ու տիրապետությունը: Սոցիալիստական մըցության սկզբունքն և՝ առաջադեմների ընկերական ոգնությունը հետամնացներին՝ ընդհանուր վերելքի հասնելու համար: Կոնկուրրենցիան տառմ և՝ վերջնականապես ջախչախիր հետամնացներին, վորպեսզի տիրապետությունդ ամրապնդես: Սոցիալիստական մըցությունն ասում և՝ վոմանք վատ են աշխատառմ, վոմանք լով, յերրորդներն ավելի լավ՝ հասիր լավագույններին և ձեռք բեր ընդհանուր վերելք: Սրանով և հատկապես բացատրվում այն աննախընթաց արտադրական վողեռությունը, վորն ընդգրկել և աշխատավորների միլիոնավոր մասսաներին, վորպես հետեանք սոցիալիստական մըցության: Ինչ խոսք, վոր կոնկուրրենցիան յերբեք չի կարող վորեւ նման բան առաջ բերել, ինչպիսին մասսաների վողեռությունն և:

Վերջին ժամանակներս մեր մամուլի մեջ հաճախ են լույս տեսնում հոդվածներ և դիտողություններ մըցության մասին: Դրում են մըցության փիլիսոփության մասին, մըցության արմատների մասին, մըցության հնարավոր արդյունքների մասին և այլն: Մինչդեռ հազվագլուխ են այնպիսի դիտողություններ, վորոնք փոքրիշատե կապակցորեն պատկերացնելին,

թե ինչպես են տանում մըցությունն իրենք մասսա-ները, ինչ ապրումներ են ունենում բանվորների մի-լիոնավոր մասսաները մըցությունն իրականացնելիս և պայմանագրերն ստորագրելիս, թե բանվորներն ինչպես են իրենց սեփական, հարազատ դործը հա-մարում մըցության գործը: Մինչդեռ գործի այս կողմը մեզ համար մըցության վերին, աստիճանի կարևոր կողմն ե հանդիսանում:

Յես կարծում եմ, վոր ընկ. Յե. Միկուլինալի գրքունին առաջին փորձն ե հանդիսանում կապակցո-րեն նկարագրելու մըցության պրակտիկայից վերցրած նյութերը, վորոնք ցուցադրում են մըցության գործը, վորպես իրենց՝ աշխատավոր մասսաների գործը: Այս գրքունիքի արժանիքն այն ե, վոր ներկայացնում ե պարզ և արդարացի պատմությունը աշխատավորական մեծ վերելքի այն խորունկ պրոցեսսների մասին, վորոնք սոցիալիստական մըցության ներքին զապա-նակն են կազմում:

Խ. Սաալին

11 մայիսի 1929 թ.



## ԵԵՆԻՆԸ ՄՐՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սոցիալիստական մրցության մասին Լենինն  
այսպես եր գրում մեզ 1918 թվականին.

«Սոցիալիզմը վոչ միայն չի հանդցնում մրցու-  
թյունը, այլ ընդհակառակն, առաջին անգամ հնարա-  
վորություն և ստեղծում կիրառել այն իսկապես  
լայնորեն, իսկապես մասսայական չափով ներս քաշել  
աշխատավոր մասսաների իսկական բաղմությունն  
այնպիսի աշխատանքի ասպարեզ, վորտեղ նրանք կա-  
րող են հայտարերել իրենց, զարգացնել իրենց ունա-  
կությունները, լերեան հանել տաղանդներ, վորոնք  
ժողովրդի մեջ դեռ չշոշափված աղքյուր են, և վորոնց  
կապիտալիզմը արորում, ճնշում, խեղդում եր հաղար-  
ներով ու միջիոններով։

Մեր խնդիրն այժմ, յերբ իշխանությունը սոցիա-  
լիստական կառավարության ձեռքին ե, մրցություն  
կազմակերպելն ե։

... Ձեռներեցություն, մրցություն, համարձակ  
նախաձեռնություն հայտարերելու համար լայն, իրոք  
մասսայաբար հնարավորություն ստեղծելու ժամանակը  
հանդիսանում է միայն այժմ։ Ուրիշների համար դարե-  
րով աշխատելուց հետո, հարկադրական աշխատանքից  
հետո շահագործողների համար,— առաջին անգամն ե  
հնարավորություն ստեղծվում աշխատելիրեն համար։  
... Բանվորներ և գյուղացիներ, աշխատավորներ

և շահագործվողներ։ Հողը, բանկերը, ֆարբիկաները, գործարաններն ամբողջ ժողովրդի սեփականությանն անցան։ Ինքներդ ձեռք առեք սթերքների արտազդության և բաշխման հաշվառումն ու վերահսկողությունը, — սրանում, և միայն սրանումն և սոցիալիզմի հաղթության ճանապարհը, նրա հաղթության գրավականը, ամեն տեսակի շահագործության, ամեն տեսակի կարիքի և աղքատության վրա հաղթանակ տանելու գրավականը։ Վորովհետև Ռուսաստանում ամենքի համար բավարար հաց, չերկաթ, փայտ, բուրդ, բամբակ, վուշ կտ, յեթե միայն տղխատանքի ու մթերքի կանոնավոր բաշխումն լինի, յեթե միայն համաժողովրդական գործառնական պրակտիկ վերահսկողություն սահմանվի այդ բաշխման վրա, յեթե միայն հաղթենք ժողովրդի թշնամիներին, հարազատներին, նրանց պնակալեզներին, ապա խարեբաներին, մակարույժներին և սրիկաներին վոչ միայն քաղաքականության մեջ, այլև առողջա տնտեսական կյանքում։

... Իսկ այդ հաշվառումն ու վերահսկողությունը կազմակերպելու համար, վոր լիովին մատչելի, լիովին տանելի յե ամեն մի աղնիվ, խելացի, ճարտար քանչորի և գյուղացու համար, ոկտք և կյանքի կոչել նրանց անձնական կազմակերպչական տաղանդները և կարգավորել մրցություն հանրապետական մասշաբարով...

... Պետք ե, վոր ամեն մի և կոմմունա», — ամեն մի ֆարբիկա, ամեն մի գյուղ, ամեն մի սպառողական ընկերություն, ամեն մի հալթայթիչ կոմիտե — հրապարակ գան, մըցելով իրար հետ։

... Ահա թե ինչ խնդիրների վրա պետք ե ծավալ-

վի մշցությունը։ Ահա թե ինչ աշխատանքի մեջ պետք է պրակահիկորեն աչքի ընկնեն և դեպի վեր շարժվեն կազմակերպչական տաղանդները, դեպի համապետական կառավարչության գործը։ Նրանք շատ են ժողովը դիմումների մեջ։ Նրանք ճնշված են միայն։ Նրանց պետք են գործադրության մասսաների աջակցությամբ, կարող են փրկել Ռուսաստանը և փրկել սոցիալիզմի գործը։—Ահա թե ինչ եր գրում Վլադիմիր Իլյիչը, յերբ խորհրդավիճ իշխանությունը դեռ նոր եր գոյանում։

Ինքը կյանքը և այն վոգնորությունը, վորով բանվորներն ու գյուղացիներն արձագանք տվին կուսակցության հրատարակած լողունգին—«ինքնարժեքի իջեցման մասին»,—վկայում են, թե Լինինն իրավացի յեր։

### Մրցությունն սկսվեց։

### Ամենաբազմազան ձեեր ընդունեց։

Այդ մի ավելորդ անգամ ել վկայում ե, թե ինչպես իրավացի յեր Լինինը՝ ստեղծագործական ուժերի մասին խստելիս, զոր ալանված են մասսաների մեջ։

Սոցիալիստական մրցությանը մասնակցելով՝ բանվորներն աշխարհումը չեղած բաներ կստեղծեն։

Մրցելով ամբողջ ֆարբիկայով, ամեն մեկն տուանձին, բոլորը միասին, հայտաբերում են իրենց ստեղծագործական նախաձեռնությունը։

Այդ աշխատանքի բարձրացրած արտադրողականությունն ե, յերբ առանձին բանվորներ որական 400 կտոր կտավի փոխարեն ներկում են 600 700 կտոր։

Յերբ կարողները 325 կտորի փոխարեն 475 կտոր են պատրաստում։

Յերբ կարի Փարքիկայում ամեն մի բանվորուհի  
յերկու վերարկուի փոխարեն յերեքն և պատրաստում:

Այս որինակները վկայում են մասսաների այն-  
պիսի վոգեսրության մասին, զոր պատմության մեջ  
անսովոր, աննախընթաց եւ:

Մըսությունից հեռու չեն մնան նաև գլուղացի-  
ները: Նրանք արդեն շարժվեցին: Բայց այդ գեռ բա-  
վական չեւ:

Պետք ե, ինչպես լենինն եր ասում՝

«Ամեն մի գլուղ մըսի մյուսի հետ»՝

— Եհրքատվության բարձրացման համար,

— Խոտոցանության մեծ տարածության համար,

— Գլուղատնտեսական մեքենաների ավելի մեծ  
քանակի համար,

— Բազմադաշտյանի համար...

## ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԲԲԻԳԱԴԻՑ ԴԵՌԻ ՄԱՍՍԱՆԵՐԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Յերկու ամիս առաջ լենինգրադի «Կրասնի Վի-  
րոքիտեցում» կազմակերպվել ե կոմյերիտական առաջին  
ըրիդագը: Այն ժամանակ ո՞ւմ մտքովը կանցներ, թե  
նու աճելով կդառնա մասսաների մի հզոր ստեղծա-  
գործություն, վորպիսին տեսնում ենք այժմ:

Մի խումբ կոմյերիտականներից մըսությունն  
անցավ համքարություններին: Այստեղ նա կոմյերի-  
տական... արտադրողականության արշավի ձևն ընդու-  
նեց: Ֆաբրիկաներում: Գործարաններում: Բաժիննե-  
րում: Համքարություններում: Կոմյերիտական հար-  
վածալին: ըրիդագներն իրենց որինակով տասնյակ

ուրիշ բրիգադներ հրավիրեցին, այս անդամ արդեն հասակավոր բանվորներից։ Ֆարբիկաններէ, գործարանների այդ բրիգադների, կոմպլեկտների, համքարությունների, բաժինների հրավերներն ընդհանուր սոցիալիստական մրցության կերպարանք ստացան։

Ապրիլի 8-ին Տվերում կնքվեց մասսաների պայմանագիրը։ Տվեր—Մոսկվա—Իվանովո պայմանագիր ստորագրեցին ինքնարժեքի իջեցման և աշխատանքի արտադրողականության բարձրացման համար։ Մանվածքային շրջաններից մրցությունն անցավ գործարաններին։

Այնպիսի խոշոր գործարաններ, ինչպիսիք են Լիբերեցկի և Կրամատորսկի գործարանները, վորոնք գյուղատնտեսակոն մեքենաներ են արտադրում, մրցման մեջ մտան։ Կրկնակոշիկների խոշորագույն ֆարբիկանները—Մոսկվայի «Կրասնիյ բողատիրը» և Լենինգրադի «Կրասնիյ տրեուգոլնիկը»—իրար մեջ պայմանագիր ստորագրեցին։ Ածխային շրջաններն արդեն լերկու ամիս և, ինչ մրցում են իրար հետ—այժմ սքանչելի հետևանքի յեն հասել։ Կարի արդյունաբերությունը, կաշեգործայինը, մետաղագործայինը, ելեկտրոգործարանները—մեր արդյունաբերության բոլոր, բոլոր ճյուղերը, հրդեհի նման մրցությամբ են բռնված։

Արժել շրջել ֆարբիկաններն ու գործարանները, թեթևակի դիտել նրանց վերափոխված աշխատանքը, նայել բանվորների հուզված դեմքերին, տեսնել նրանց մըրկահույզ շարժումները աշխատանքի մեջ, այցելել թուուցիկ միտինգները, վոր կազմակերպված են ֆարբիկանների բակում, —լսել բանվորների խոսակցու-

թյունները համքարություններում ընդմիջումների ժամանակ,—

և դուք ինքններդ կըռնկվեք մի վոդեորությամբ, վորով բռնած են լերկը բոլոր աշխատավորները:

Մրցությունն ընդլայնվում ու աճում եւ Լրագրերը փայլում են նոր մրցահրավերներով: Ֆարբիկանները գյուղերի հետ, գյուղերը հրավիրում են ուրիշներին:

Մի փոքր ել—և շինարարության ընդհանուր վոգեորության մեջ կմիաձուլվեն առանձին Փարբիկաններն ու գործարանները:

Միթե կարող ելորեն գլուղ կամ գործարան իր առանձնակյաց կյանքով ապրել, յերբ նրանք պրոլետարական խոսքի ամրագույն թելերով կապված են մյուս Փարբիկանների հետ, իսկ նրանք իրենց հերթին՝ ուրիշների հետ: Յերբ Փարբիկաններից և գործարաններից դեպի գյուղ մեկնվեցին մրցության հրավիրող ձեռքեր: Հրավիրողներ ու ոգնողներ:

Ամբողջ լերկիրը հյուսվել ե միևնույն ձգտումներով և շահներով:

Այս մրցությունը՝ աշխարհի պատմության մեջ նմանը չունեցող կազն ե բանվորների և գյուղացիների մեջ:

Այս մրցությունը իսկական սոցիալիստական է:

## ԱՌԱՋԻՆ ՆՇԱՆԱՋԻԳՆԵՐԸ

Մոսկվայում առաջին նշանաձիգը լեղավ Բառւմանովսկից շրջանը: Նրա հրավերին արձագանդ տվին Ռազմություններունովսկից շրջանը՝ Մոսկվայում և Վի-

մի անգամ տեղեկություններ բաց թողնել մըցության  
ընթացքի մասին:

Վորոշելու համար, թե վո՞րը ֆարբիկաներից և  
գործարաններից հաղթեց, հատուկ կոմիսարիա կլինի  
ինժեներներից, տեխնիկներից և հասարակական կող-  
մակերպություններից:

Այս ամենը պատմեց շտարի նախադահը, Բառ-  
մանովսկու շրջկոմի ընդարձակ սենյակումը նստած,  
շտարի ժողովին սպասելիս:

— Ցեթե ուղում եք տեսնել, թե ֆարբիկայում  
ինչպես և ընթանում մըցությունը, գնացեք ելեկարո-  
գործարանը, նա արդեն սկսեց աշխատանքը, — ավե-  
լացրեց նախադահը:

### ԳԵՏ-ԱԿԱՆՆԵՐԻ ՄՈՏ \*)

Ելեկտրոգործարանն ելեկտրական ճրադներ և  
պատրաստում: Հենց այն ճրագները, վորոնք կուլտու-  
րա յեն բերելու գույզը և չտեսնված լուսով լուսավո-  
րելու յեն փայտե պատերը, ընդմիշտ քշելով մարխի և  
նավթի ճրադի մուրը:

Ցեվ ահա այդ գործարանում՝ առաջինը Մոսկվա-  
յում, սկսվեց մըցությունը:

«Գետովեց» պատի թերթի առաջին համարն ել  
կարծ, միքանի տողով հաղորդեց՝

Ապրիլի 1-ից գործարանը մըցության և անց-  
նում — և այստեղ ել պայմաններն ելին հաղորդվում:

Այս հակիրճ ծանուցումը տաք վեճեր առաջ բե-  
րեց համքարություններում:

\*) Գետական ելեկտրոտեխնիկական արհեստ. առևս, — ԶԵՅ:

Բնդմիջումին բանվորները գնում եյին վերատեսչի առանձնասենյակը, պարսպի պես կտնզնում սեղանի շուրջը և համառորեն պահանջում պատասխանը:

— Ի՞նչ, դու լրագրում տնտեսելու 15 տոկո՞ս ես դրել. մեղ դու հասկանալի լեզվով ասա, այդ ի՞նչքան կանի:

— Ի՞նչո՞ւ մեղանում մինչեւ որս արտադրական ծրագիրը կախված չի:

— Ո՞ւր և մեղանում հաշիվը տնտեսության մասին:

— Դե վոր մըցություն ե, պատմեցեք մեղ ի՞նչպես հարկն ե, վոր հասկանալի լինի:

— Ժողով ենք պահանջում: Պահանջում ենք ժողով. — Վորոտացին համքարություններում, բաժիններում, ամբողջ գործարանում: Յեզ անցան հրեղեն ալիքով ժողով ժողովի յետեկից:

Բանվորների ընդհանուր ժողով, արտադրական խորհրդակցություններ համքարություններում, վարպետների, ինժեներների ժողովներ հոսում ելին անընդհատ:

Մըցության պայմանների, պըեմիաների խընդիրը ամենքին եր ալեկոծում: Յեզ ահա, վերջապես, համագործարանալին ժողովում վորոշվում ե՝

Մըցությունն սկսվում է 1929 թվականի ապրիլի 1-ից մինչեւ այս օրեվա հոկտեմբերի 1-ը: Նա միքանի կետերի լեռ բաժանվում:

~~ԴՐԱ~~ Գործարկումների պակասեցման համար

Մըցությունը տարվում է բոլոր համքարություններում: Առաջին պըեմիան՝ 150 ոռոբի կստանա այն

բորգակիյ շրջանը՝ Աենինզրադում։ Բայց մըցության առաջին խոսքը պատկանում է Բառևանովսկու շըրջանին։

Կուսակցության շրջկոմում կազմվեց մըցության շտաբ 11 հոգուց։ Այնտեղ մտան՝ ընկ. ընկ. Քուշնարյովը, Տորմազը, Բելինսկին, Սոլովյովը, Պիրիկովը, Դեկնեվը, Գետրովը, Իվանովը, Սոլիմանենկոն, Միխալյովը նախագահությամբ ընկ. Գվենդերոտելի։

Մենք վոչ մի փորձ չունենք, — ասում եր Գվենդերոտեն, — բայց մտածում ենք մըցությունն այնպիս տանել, վոր մըցության լենեն այն ֆարրիկաներն ու գործարանները, վորոնք միատեսակ ապրանք են մշակում։ Յեթե այդպիսիները չլինեն Մոսկվայում, ուրեմն կարելի յե հրավիրել ուրիշ քաղաքներ։

Մըցության մեջ մտած ամեն մի գործարանում կամ ֆարրիկայում կազմվում ե շտաբ՝ հինգ հոգուց։ Այնտեղ անպայման պետք ե մտնեն՝ վերատեսուչը, ֆաբկոմի նախագահը, կուսրջիջի քարտուղարը, բանվորների և կոմյերիտմիության ներկայացուցիչները։

Այդ շտաբը մըցության կարգն ե մշակում, հսկում ե նրա կատարմանը և պատասխանատու յե նրա ճիշտ ընթացքի համար։

Մենք մըցություն հայտարարեցինք 3-4 յեռամսյակի համար մինչև 1930 թվականի հոկտեմբերի 1-ը։

Մենք կմըցենք ինքնարժեքի իջեցման, վառելիքի կրծատման, աշխատանքային որվա խտացման և, բացի դրանից, տնտեսական ծախսերի իջեցման համար։

Պատի թերթերը պարտավոր են յերկու շաբաթը

համքարությունը, վորի մոտ գործալքումներն ավելի պակաս կլինեն, քան մարտ և փետրվար ամիսներում:

Ցերկրորդ պրեմիան՝ 75 ռուբլի կոտանա այն համքարությունը, վորի մոտ գործալքումները լեթե չեն պակասի, չեն ել ավելանա անցլալ ամսից:

### Կանգառումներ պակասուրիան համար

Ամեն մի համքարություն մրցում ե մյուսի հետ: Այն համքարությունը, վորի մոտ կանգառումներն ավելի պակաս կլինեն, քան նախորդ ամսում, խնալված ամեն մի կանխիկ ռուբլուց կոտանա 20 կոպեկ վորպես պրեմիա:

Ցեթե ճրագների բաժինը տանի, նա մոտավորապես ստանալու լե 500 ռուբլի:

Ցերկրորդ պրեմիան—250 ռուբլի—կոտանա այն համքարությունը, վորի մոտ կանգառումները չեն ավելանա:

### Ռեազրական ծրագիրն իրազործելու համար

Ամեն մի ֆաբրիկա և գործարան իր վորոշ ծրագիրն ունի: Խնչքան պետք ե պատրաստել այս կամ այն ապրանքից: Այդ ծրագիրը հաստատում ե ժողովը բարեկան անտեսության խորհուրդը:

Ելեկտրոդործարանը խնդիրն ալսպես դրեց՝

— Այն բաժինը, վոր ավելի ճրագ կողատրաստի, քան նախատեսված ե ծրագրով, ծրագրից դուրս պատրաստված ամեն մի ճրագի ինքնարժեքի 10 տոկոսը պրեմիա կոտանա:

Այսպիսով, յեթե ճրագների բաժինը ծրագրով  
սահմանված քանակից մեկ տոկոս, ավելի պատրաստի,  
կստանա 140 ռուբլի և այլն:

Յերկրորդ պրեմիան՝ 150 ռուբլի կստանա այն  
բաժինը, վոր արտադրական ծրագիրն ամրողավին  
իրազործել և:

### ԵԲԲԱՐԺԵԲԻ ԻՉԵՑՈՒՄ

Մրցությունը կտարավում է վոչ ըստ համքարու-  
թյունների, այլ՝ ըստ բաժինների: Յեզ հաղթող ե  
համարվում այն բաժինը, վոր ամեն մի ռուբլուն վոչ  
թե 15 կոպեկով եժան ճրագ և բաց թողել, այլ, ինչ-  
պես առված և ճրագում, ռուբլուն 30 կոպեկով:

Ինքնարժեքի այդպիսի իջեցման պրեմիան մի-  
այն ճրագների մի բաժնի համար 3750 ռուբլու լին-  
հասնում:

Ինչ վերաբերում է յերկրորդ պրեմիային, այն  
տրվում է այն բաժնին, վորը ճրագի ինքնարժեքը  
ռուբլուն 15 կոպեկով իջեցրել ե, ինչպես վոր տսված  
և ծրագրում:

Պրեմիաները բաժանվում են բանվորների վրա և  
ծախսվում են նրանց հանգստյան տներ ուղարկելու,  
թատրոնի տոմսերի, գրքերի և այլ կուլտուրական  
կարիքների վրա:

\* \* \*

Ելեկտրոգործարանի մրցության շտաբում  
ընտրված են՝ Պրոկուլին, Միլկին, Նիկիտին, Վայն-  
բլատ և Ազենշտելինը: Այդ ընտրություններով վերջա-  
ցավ ժողովը:

Յերեք որ ել գեռ չեր անցել մըսության հայտարարումից հետո, վոր գործարանում սկսեցին մինչև այժմ չեղած բաներ կատարվել:

Միթե յերեկոց գեղել ե, վոր բանվորը խնդրի պակասեցնել իր ոռճիկը: Մինչդեռ այստեղ հենց ալդպիս ել յիշավ:

Հոսանաչափի \*) (արանսֆորմատոր) բաժնի բանվորները պատգամավոր ուղարկեցին վերատեսչի մոտ մի հայտարարությամբ: Ճմասված, կեղտոտ մի կտոր թղթի վրա գրված եր:

«Մենք, հոսանաչափի բաժնի բանվորներս կարծում ենք, վոր ամեն մի պատրաստված իրի գնահատությունը կարելի յե իջեցնել 5 տոկուով: Մենք առանց այն ել բավարար չափով վաստակում ենք»:

(Ստորագրություններ)

Ճրագների բաժնից ստացվել ե մի ալսպիսի հայտարարություն. «Մենք պահանջում ենք մեր պատրաստած իրերի նորսայի ժամաշափիր \*\*) նոր ստուգման յենթարկել: Յեթե ուղում ենք մրցել, ապա ուրեմն պետք ե մրցել առանց խաբերայության: Մինչդեռ տեխնիկն ստուգում ե, կանգնում մեքենալի մոտ,

\*) Հոսանաչափ—արանսֆորմատոր—ելեկտրական հոստիք-ները չափելու մեքենա:

2. Նորմա—(կուլար)—բանվորին արված մի առաջադրություն ե, վոր նա կարող ե կատարել վորոշ ժամանակում՝ մեկ ժամում, բանվորական որում:

Ժամաշափ—խրոնոմետրաժ—աշխատանքի ժամանակ նորմաներն ըստ ժամերի ստուգելու: Տեխնիկը՝ ժամացույցը ձեռքին, ստուգում ե բանվորի աշխատանքը և հաշվում, թե բանվորն ինչքան ժամանակում կտրող ե վորոշ իրը պատրաստել: Այդ հաշվով ել սահմանվում ե որվա կամ ժամվա նորման:

իսկ մենք դիտմամբ «գլխիկը» քարթում ենք 25 բոպեցում, նա ել զրա հիման վրա վորոշում և որվա նորման։ Բայց հենց վոր նորման վորոշեցին, բոլորն ել սկսեցին գլխիկները քարթել 10 բոպեցում։ Այդ ճիշտ չեւ Պահանջում ենք վերանայել։

ՃՐԱԳՆԵՐԻ ՔԱԺՆԻ ԲԱՆՎՈՐՆԵՐ»

Գետականները շատ գիտակցորրն կպան ինքնարժեքի իջեցմանը։ Նրանք առաջիններն ելին, վոր կպան մըցությանը և, յերեկի, ուրիշներից առաջ ել կլինեն։

## ԵԺԱՆ ՅԵՎ ԱՄՈՒՐ ԿՐԿՆԱԿՈՇԻԿ ՏԱՆՔ

«Կրասնի բողատիր»—այդպես ե կոչվում կրկնակոշիկների գործարանը Մոսկվայում։ Այդ նրա պահեստներիցն ե, վոր գլուղ ու ավան, քաղաք ու շեն են ուղարկվում նոր-նոր փայլուն կրկնակոշիկներ։

Նրանց փայլն ամենքին ե հայտնի։ Մեզնում արդեն քիչ գլուղ կա, վորտեղ կրկնակոշիկ չեն հագնում։ Կեղեն տըեխները տեղի չեն տալիս ուտինի փայլուն լաքին։

Գործարանում զանազան տեսակի կրկնակոշիկ ե պատրաստվում։ Ցեվ հասարակները՝ ցածր կրունկներով, վոր մեծամասնությունն ե հագնում, և՛ նորաձե կրկնակոշիկներ՝ ֆրանսիական բարձր կրունկներով։

«Կրասնի բողատիրից» ամբողջ կապոցներով կրկնակոշիկներ են ուղարկվում նաև արտասահման՝ Պարսկաստան, Սիրիա, Մոնղոլիա։

Մտնում ես պահեստն ու մոռանում, վոր կողքիդ դազզլահներ ու մեքենաներ կան։ Ռետինից ինչ-վոր հեռավոր լերկրների հոտ ե բերում, վորտեղից այն

մեղ մոտ են բերում: Իսկ կը կնակոշիկների ծալված քթերը՝ խրաների համար շինված ծակոտիկներով, վորոնք պատրաստվել են Սիրիա ուղարկելու համար, ոտար ժողովուրդների պատկերներն են արծարծում մտքիդ մեջ:

Այնտեղ, հեռավոր յերկրներում, սևամորուս սիրիացիներն ու կորմրամորուս պարսիկները, ինչպես և զեղնադեմ մոնգոլները պետք ե հագնեն մեր բանվորուհիների ձեռագործները: Հատկապես բանվորուհիների, վորովհեակ կը կնակոշիկների գործարանում գըրեթե միայն կանոյք են աշխատում:

Սփսոս վոր, տարածվելով ամրող աշխարհում, լաքած փայլուն կը կնակոշիկները չեն կարող պատմել, թե վորպիսի գմիւր պայմաններում են պատրաստում իրենց: Գործարանը կանգնած ե անտառի միջին, Բոգորոդսկիյ գյուղում, Մոսկվային մոտիկ: Նույնիսկ սոճենու հոտը չի կարողանում հաղթահարել բնողինի հոտին:

Գործարանին մոտենալիս արդեն զգում ես բեկենի լուղի (սկիպիդար) և բենզինի շշմեցուցիչ հոտերը: Նրանցից գլուխդ պառակտ և գալիս: Իսկ բանվորուհիներն իրենց հերթափոխության ամրող ութ ժամը նստում են շենքի մեջ, կծու շոգիով շըրջապատված բենզինի և բեկենի լուղի մթնոլորտով: Տարվա աշխատանքի ընթացքում բանվորուհիները խմում են բենզին և բեկենի լուղի: Նորեքումս գործարանային մանկական մսուրներում մայրերի կաթը վերցրել ելին հետազոտելու համար: Յեզ նրա մեջ բենզին գտան: Վնասաբեր պայմաններից գործարանի բոլոր բանվորուհիները սակավարյուն են, դալուկ և գրգռված:

Մոտիկ ժամանակներս գործարանը յոթնամբաներթափոխական աշխատանքի տնօցավի Բանվորուհիները, վոր առաջ իրենց զուլուկ կրկնակոշիկի վրա առանձին ելին աշխատում, կոնվելերի անցան:

Կոնվելերն ինքնաշարժ ժապավեն եւ Այստեղ նու անցնում եւ լերկացն սեղանով և անընդհատ ձգվում եւ մի հատուկ մեքենայով: Սեղանի առջև նստում են 4-5 բանվորուհիներ:

Սեղանի ծալրին նստող վարպետուհին վերցընում եւ կաղապարը, հազցնում նրա վրա ռետինեւ ծալրամասը և ղնում սեղանի վրա: Ժապավենը կաղապարի հետ միասին շարժվում եւ դեպի հետեւալ բանվորուհին: Սա հազցնում եւ կրնկակալը, սոսնձում եւ, և կաղապարը գնում եւ դեպի հաջորդը: Այսպես, տասներկու բանվորուհուց անցնելով՝ կրկնակոշիկը բոլորովին պատրաստ, մեքենան եւ ընկնում, վորտեղ սոսնձով կպցվում եւ ներբանը (պադոշ) և ապա գնում եւ լաքվելու:

Ամեն մի կոնվելերն որական 1000 զուլուկ կըրկնակոշիկ եւ բաց թողնում:

Հենց վոր կոնվելերի անցան, սկսեցին գործարանից ավելի շատ կրկնակոշիկ բաց թողնել, բայց նըրանց վորակը վատացավ:

Բանվորուհիները կոնվելերի անցնելիս այսպես վճռեցին՝ կարելի է վայրիվերու աշխատել: Ամբողջ աշխատանքն այժմ ընդհանուր եւ Հանցավորին չես գըտնի: Վարպետուհին ինձ մոտ չի գա ու չի ասի՝ «այդ դու լես փչացրել ապրանքը»:

Աշխատանքին առանձնապես վատ սկսեցին վերաբերվել կանաֆլեքան, Վեղենինան և Սլաքոդան:

Անփույթ վերաբերմունքի հետևանքով կրկնակռւ շիկն ամուր չի դուրս գալիս: Հազնողը շատ շուտ և պատռում: Կրկնակռշիկների գործարանն այդպես վատ պատրաստված կրկնակռշիկների զույգը 30 կոպեկով ավելի հժան և ծախում: Յեվ այդպիսով ամեն մի որ 2000 ռուբլի վատ և կրում:

Յերբ խոտան (ըրակ արած) կրկնակռշիկները բերում են բանվորուհիներին ցույց տալու, նրանք առարկում են:

— Մենք ուրախությամբ լավ կաշխատելինք, բայց մեղնում մատերիալը շատ վատ ե: Միջնադիբն ել (ստելկա), կրկնակալն ել (զադնիկ), թաթերն ե (աղերեղա) — վոչ մեկը բանի պետք չե:

Սակայն այդ այնքան ել ճիշտ չե: Շատ բանում բանվորուհիներն են մեղավոր:

Ստուգության համար վերցրին ու 32 մեքենացից փոխեցին Սերբին և Սոլվյով բանվորներին: Նըրանց տեղը դրին Գրաչնին ու Կոտովին:

Ի՞նչ եք կարծում, ի՞նչ լեղավ: Բացի նրանից, վոր նրանք որական ավելի պատրաստեցին, քան առաջվա բանվորները, խոտանն ել վոչ թե հարյուրին 15 զույգ տվին (ինչպիս նրանք ելին տալիս), այլ ընդդամենը 5 զույգ:

Ահա քեզ վատ ապրանք: Ուրեմն ալստեղ մեղավորն ապրանքը չե, այլ իրենք՝ բանվորները:

Այս տարի գործը վատ եր «Կրասնի» բողատիւրում:

Ծրագիրը, վոր նրանց համար հաստատել եր ժողովրդական տնտեսության խորհուրդը, նրանք իրենց այդ ծրագիրն ել չիրագործեցին:

Խոկ նրանց տրված եր ալսպիսի ծրագիր։ Նախ որական վոչ թե 50,000, այլ 56,000 կրկնակոշիկ բաց թողնել։ Յեվ ծախել վոչ թե 2 ո. 80 կոպ., այլ 2 ո. 44 կոռպ.։ Դե, իհարկե, խոտանն ել պակասեցնել։

Բողոսիրցիները կես տարուց ավելի աշխատեցին, սական իրենց ծրագիրն իրագործելու մասին չեն ել մոռածում։

Նրանց մոտ խոտանը վոչ միայն չպակասեց, այլ, ընդհակառակն, ավելացավ։

Ինքնակամ գործալքումները նույնպես ավելացան։ Ինչպես վոր ամեն մի բանվորուհի կոնվեյերով որական 18 զույգ կրկնակոշիկ եր պատրաստում, այդպես ել մնացել եւ։

Յեթե մինոր բան կա «Բողատիրում», այդ այն ե, վոր կրկնակոշիկ պատրաստող բանվորուհիների աշխատավարձն աճեց։ Անցյալ տարի որական 3 ո. 71 կոպ. եր, իսկ այժմ դարձավ 4 ոռուք. 28 կոպ.։ Յեվ ահա մրցությունը հարմար ժամանակին վրա հասավ։

Կենինգրադի «Կրասնիյ տրեուգոլնիկ» գործարանը «Կրասնիյ բոգատիրին» մրցության կանչեց։

Անտեղից նամակ ուղարկեցին ալսպիսի հրավերով։

«Մենք խոսք ենք տալիս, վոր մեզնում որական հարյուրին մեկ զույգ խոտան կրկնակոշկից ավելի չի լինի։

«Մենք խոստանում ենք աշխատել կատարելապես առանց գործալքումների։—Այդպես են գրում «Կրասնիյ տրեուգոլնիկից»։

Յեվ շարունակում են։

«Մենք գիտենք, վոր ձեզնում խոտան, գործա-

լքումներ, կանգառումներ շատ կան։ Գիտենք, վոր դժվար կլինի ձեզ համար մըցության մեջ մտնել մեղ հետ։ Այսուամենայնիվ մենք ձեզ մըցության ենք հրավիրում, վորովհետեւ մենք ընդհանուր ուժերով պետք ե տմուր և եժան կրկնակոշիկ տանք բնակչությանը։

Բոգատիրցիները մեկ ուղեցին վիրավորվել «Ճշեռագոլնիկից»—թե նրանք մեր աչքն են ծակում։ Սակայն մտածեցին, մտածեցին ու ամբողջ ժողովով վըճռեցին ընդունել հրավերը։

Յնիվ մեկենիմեկ նախապատրաստության կպան։

11 հոգուց շտար կազմեցին։ Ալստեղ և և՝ գործարանի վերատեսուչը, և՝ ամեն մի արհեստանոցից միմի բանվոր, կուսբջիջի քարտուղարը, ինժեներներ։

Կազմակերպեցին ժողովներ բանվորների հետ՝ ըստ բաժինների, կրկնակոշկարանում, լուղարանում, լաքարանում։ Ժողովներ կազմեցին վարպետուհիների հետ։

Յեվ վորպեսզի ամեն մի բանվորի շահագրդուն ավելի լավ աշխատել, յերեք հազար ուուրի առանձնացրին պրեմիա տալու համար։

Բայց աստեղ՝ պրեմիայի խնդրում, քիչ եթ մընում շփոթություն առաջ գար։

Բանվորներն իմացան, վոր պրեմիան Յ հազար ուուրի լե, ու կարծեցին, թե այդ գումարը մեկին և արվելու։

Քիչ եր մնում աղմուկ բարձրանար։

Սակայն պարզվեց, վոր պրեմիան կբաժանեն ըստ բաժինների և այնտեղ արդեն ըստ համարությունների և կտան այն սեղանին, վորը բոլոր պայմանները կատարած կլինի։

Կշահի այն սեղանը, վորտեղ վոչ մի գործալը-  
քում չի լինի:

Վորտեղ ամենաին իսուան չի լինի:

Ցեզ ով որվա ընթացքում ամենից ավելի կըրկ-  
նակոշիկ կալատրաստի:

Հենց վոր ըոգատիրցիները «Կրասնիլ տրեռ-  
դոլնիկի» հետ պալմանագիր ստորագրեցին և այդ  
բանն իմացան բոլոր բանվորուհիներն՝ ըստ համքա-  
րությունների, իսկույն լեռաց աշխատանքը:

Կրկնակոշիկ արհեստանոցի վարիչ Ընկ. Իվա-  
նովն ուղղակի շակալիկ եւ Բանվորուհիները նրան քաշ  
են տալիս այս ու այն կողմ:

— Ընկեր Իվանով, ինձ փոխադրիր այն սեղանը:  
— Իսկ ինձ վարպետուհի Սիմեոնովացի մոտ:

Գլուխ պատռելով գոռում են ամենքը:

Կոմյերիտուհիները — սրանք միանգամից առանձ-  
նացան: Իրենց համար առանձին սեղան վերցրին:

Դե, պառավներն ել, վորոնք 10-15 տարի աշխա-  
տում են, նույնակես անջատվեցին:

Ցեզ այսպես, այդ կնիկները ջոկջոկվեցին, ինչ-  
պես զինվորներ՝ կովից առաջ:

Մեկը մյուսին ստուգում ե, թե լա՞վ ե աշխա-  
տում:

Իսկ Վեդենինալին ու Սլավոդային վոչվոք չի  
վերցնում իր սեղանը:

— Ճանաչում ենք նրանց: Միշտ ուշանում են:

— Նրանց պատճառով մենք չենք շահի:

— Մեզ ուրիշ վարպետուհիներ ավեք:

Կան ել այնպիսիները, ինչպես Զինա Սոբուկան,  
վոր վարիչին ուղղակի ասաց,

— Այս կոնվիւերի վրա աշխատել չեմ ուզում: Նրանք հաղիվ-հաղ են աշխատում: Յես նրանցից շատ ավելի լավ եմ աշխատում: Ինչու պետք է նրանց պատճառով տուժեմ յես: Փոխադրեցիք ինձ մի ուրիշ տեղ:

Առանձնապես խեթ-խեթ են նայում իրար 23-րդ և 15-րդ սեղանները:

23-րդում միայն կանալքն են խմբված, իսկ 15-րդում կոմյերիստուհիները:

Ի՞նչ աստիճանի կրակ են կտրել: Ուղղակի՝ զարմանք:

Բջիջում, քարտուղար Կոգրյաշովի շուրջն են խմբվում տղամարդ բանվորները: Ամենքը հարցնում, հետաքրքրվում են:

Ալստեղ ել յուղաբանի բաժնի վարիչն և գաղաղել, այն աստիճանի ջղալսացել ե:

— Ժողովն ինձ այսոր անհրաժեշտ ե, իսկ կը կենակոշկարանն ինձնից ակումբն և խլում:

Քարտուղարի վրա յեն գոռում: Տենդի մեջ գալարվում և զործարանը:

Ակումբն ել մրցության քաշվեց: Ալնտեղ ներկայացում են պատրաստում մրցության մասին, ինչպես և պատի լրագիր:

Մինչև իսկ պիոներներն ել մասնակցում են մըրցությանը:

Իրենց ակումբումը կախեցին մի մեծ պլակատ:

— Պիոներ, հսկիր ծնողներին, վոր չգործալքեն:

— Դործալքումը արտադրությանը վնասում ե:

Փակունագործ Սեմեոնովը համքարության մեջ պատմում ե ու ծիծաղում:

— Նույնիսկ մանուկներն ել այժմ բանիմաց են:

դարձել։ Յերեկոյան լես ուշ գնացի տուն։ Ուղեցի մի-քիչ կարդալ, իսկ իմ Վանլուտկան ասում ե. «Հայրիկ, տես, քնած չմնաս, վաղն աշխատանքից չուշանաս։ Դը-րանից մեծ մնաս կգա»։

— Դե արի ու տես, —տարածում ե ձեռքերը Սե-մեռնովը—յերբ մանկիկներն ել են խոսում, ուրեմն մենք պետք ե մեղ հավաքենք։

Բողատիրցիները պինդ կպան մրցության։

## ՀԱԶԱՐԱՎՈՐ ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

«Տրյոխգորնայա մանուֆակտուրան (նախկին Պրոխորովսկայա մանուֆակտուրա) կանչեց Տվերի մանվածադործային հսկալին—«Պրոլետարկա» Փաբրի-կային։ Այդ հրավերը «Պրոլետարկան» ընդունեց։

1929 թվականի ապրիլի 8-ին Փաբրիկալի ներ-կայացուցիչները, մյուս ինն մանվածագործային Փաբ-րիկաների ներկայացուցիչների հետ միասին, վորոն-ցում 58 հազար բանվոր կա, ստորագրեցին հազարա-վոր բանվորական մասսաների սոցիալիստական պայ-մանագիրը։

Պայմանագիրն ստորագրելուց առաջ Տվերում տեղի ունեցավ համարանվորական ցույց։

Տրյոխգորցիների անունից պայմանագիրն ստո-րագրեցին Շիտով և Բերգեր բանվորները։

Այդ պայմանագիրը պարտավորեցնում ե «Տրյոխ-գորկայի» բանվորներին ապրանքի ինքնարժեքն ի-ջեցնել ութից վոչ պակաս տոկոսով։

Հեղափոխական խոստումը տրված ե. Տրյոխգոր-ցիները պատվով կկատարեն այն։

Ալդ պայմանագիրը գիտե ամեն մի բանվոր:

Տրյոխգորկալի բանվորները միշտ առաջազեմ են յեղել:

Ալդ նրանք եյին, վոր բարբիկադների վրա կըուվում եյին բուրժուազիալի դեմ 1905 թվականի պայքարում:

«Տրյոխգորկայի» բանվորները շատ անդամ են որինակելի հերոսներ հանդիսացել ճակատներում՝ հրացանները ձեռներին: Նրանք գնում եյին Վրանդելի, Կոլչակի, Դենիկինի դեմ, պաշտպաննելով խուրհուրդներն ու իրենց ֆարբիկաններն ու գործարանները: Այժմ նրանք նոր արշավի լին դուրս յեկել, արշավի՝ եժան ապրանքի համար:

ԶԵ՞ վոր ֆարբիկան այս տարի պետք ե յերեք միլիոն ռուբլի տնտեսի, վորպեսզի ժողովրդական տնտեսության խորհրդի ծրագիրն իրազործի:

Ցերեք միլիոն ռուբլի՝ ալդ կատակ չե: Դրա համար պետք ե ապրանքի ինքնարժեքն իջեցնել 7,7 տոկոսով:

Իսկ ինքնարժեքն այդ չափով իջեցնելու համար պետք ե լարել ամեն ջանք ու ճիգ, բոլոր ուժերը հավաքել:

Մինչև այժմ «Տրյոխգորկայում» շատ անկանոնություններ կային: Ամեն որ տշխատանքի չեն դնում 40—50 բանվոր:

Ֆարբիկալում սրիկալության և հարբեցողության շատ զեղքեր կան: Անցյալ տարի գողության մեջ նկատվել են 163 հոգի, իսկ այս տարի՝ ել տվելի, արդեն 225:

Խոտանն ել «Տրյոխգորկայում» միջին չափով ելի հասնում ե յերեք ու կես տոկոսի:

Ճիշտ ե, յեթե համեմատելու լինենք Արելմանի ֆարբիկալի հետ, վորտեղ խոտանը 16 տոկոս ե, քիչ կերևա:

Տըլոխզորցիները խոստում են արել, թե առ 1-ն մայիսի և վճռ մի տոկոս խոտան չի լինի:

Գործարանն սկսեց մրցությունը, մանրամասն ծրագիր մշակելով: Ահա այն՝

## ՄՐՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄՔԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԲԱՆ- ՎՈՐՆԵՐԻ ՄԵԶ

### ԱՀՅԱԲՈՂ Բաժանմունք

Մրցումը տեղի է ունենում մեքենաներին սպասարկող կոլլեկտիվների մեջ: Կոլլեկտիվի համար 75 ռ. գումարով պրեմիա յե նշանակվում:

Մրցությունը տեղի է ունենում նաև յերեք հոգուց կազմված բրիգադների մեջ, վորոնք կուբերն են լցնում:

Մրցության պայմանները: Կուբի մեջ բոլորովին լիք ապրանք լցնելը յերեք հոգով: Խոտանի բացակայություն—(թերեփ) ապրանքը վատ դարսելու և կանգառութերի պատճառով՝ կուբերը դատարկելիս:

Ներքին կարգավորության կանոնների խախտման և գործալքութերի բացակայություն, յերեք ամսվա ընթացքում:

Լավագույն հետևանքների հասած կոլեկտիվը 75 ռուբլու չափ պրեմիա կստանա:

Մրցությունը տարվում է նաև մեքենավարների մեջ—լավագույն մեքենավարի համար:

Լավագույն մեքենավարի համար պայմանները

հետեւյալներն են՝ նկատողությունների բացակալություն յերեք ամսվա ընթացքում, գործալքման բացակայություն նույն ժամանակամիջոցում, մեքենավարի հանցանքի հետեւանքով առաջացած խոտանի բացակայություն (պատրաստումներ և պրկումներ), խնայողական վերաբերմունք դեպի մատերիալի ծախսումը:

Հաղթանակած մեքենավարը լավագույնն է համարվում և պրեմիա յեւ ստանում 30 ռուբլի:

### ԶՈՐԱՆՈՑԱՅԻՆ ԹՄԲՈՒԿՆԵՐԻ ՎՐԱ

Մրցությունը տեղի յեւ ունենում կոլեկտիվներում:

Լավագույնը կհամարվի այն կոլեկտիվը, վորը հետեւյալ պայմանները կկատարի.

Խոտան, բծեր բաց չի թողնի, վոչ մի գործալքում տեղի չի ունենա յերեք ամսվա ընթացքում:

Մի մարդով կրճատվի և նկատողություն չունենա:

Այս բոլոր պայմաններն իրազործած կոլեկտիվը 120 ռուբլի պրեմիա կստանա:

### ՏՊՈՂ ԲԱԺԻՆ

Մրցում են մեքենաներին սպասարկող կոլեկտիվներն ու փոխանակախմբերը:

Մրցության պայմանները: Իր մեքենաի արտադրանքի առավելագույն բարձրացումը՝ յերկրորդ յեռամսյակի համեմատությամբ, միակերպ ներկատվության\* և զարդանկարների պայմանում: Խոտանի տո-

\*) Զթատիվ մեքենաները լինում են՝ միաներկ, յերբ մեկ ներկով են տպում, բազմաներկ՝ յերբ շատ ներկերով:

կոսի կրնատում, ներկերի ներկ-եփարան արտահմնելու կընատում՝ զարդանկարների վրա աշխատելուց հետո:

Ծախսերի, ոժանդակ նույթերի (ռակլի\*), լատինգ\*), մահուղ, խողանակներ և այլն) կրնատում, գործալը-քումների բացակայություն կոլեկտիվում լերեք ամսվա ընթացքում:

Սահմանվում են ընդումենը լերկու պրեմիա.

Առաջին պրեմիան ալսակս և բաշխվում՝

Կոլեկտիվի ռակլիստին . . . . .	100 ռուբլի.
-------------------------------	-------------

Բացթողնողին . . . . .	50 ռ.
-----------------------	-------

Կոլեկտիվի բանվորներին . . . . .	125 ռ.
---------------------------------	--------

<u>Ընդումենը՝</u>	275 ռ.
-------------------	--------

Յերկրորդ պրեմիան՝

Ռակլիստին . . . . .	75 ռուբլի
---------------------	-----------

Բացթողնողին . . . . .	25 ռ.
-----------------------	-------

Կոլեկտիվի բանվորներին . . . . .	75 ռ.
---------------------------------	-------

<u>Ընդումենը՝</u>	175 ռուբլի:
-------------------	-------------

Նույն պայմաններով մրցությունը կատարվում է՝ շինարար-փաթթարանում, վորտեղ 50 ռուբլի պրեմիա յեւ սահմանվում լավագույն մեքենավարի համար. ներկ-եփարանում, վորտեղ մրցում են բաժանմունքները, և վորտեղ՝ սահմանվում է լերկու պրեմիա՝ բաժանարարին — 50 ռուբլի և ներկեր քամողին — 25 ռ.:

\* ) Ռակլի—պողպատե հարթ շերտ, վոր գործ և դրվագ ավելուգ ներկերը հանելու:

\*\*) Լատինգ—հատուկ տեխնիկական գործվածք, գնում են տպվող ապրանքի տակը:

Ներկարանում մրցում են սև ջիղերների \*) յեռյակները, վորոնց սպասարկում են յերկու քանվորներ:

Լավագույն լեռշտկի կոչումն ստանալու պայմանները հետեւյալներն են՝

Առանձինի բացակայություն:

Գործալքումների, նկատողությունների բացակայություն՝ յերեք ամսվա ընթացքում:

Մեքենաների և աշխատանոցի մաքրություն և հստակություն:

Բոլոր պայմանները կատարած բանվորներին պրեմիա յետքում 120 ռուբլու չափով՝ ամեն մի յեռյակի համար:

Ոճառի մեքենաներում և ներկարարական ապահովաներում մրցությունը կազմակերպվում ե այն կուլյեկտիվների մեջ, վորոնք սպասարկում են №№ 1, 2, 3 ոճառի մեքենաներին, և միջանցիկ ապահովաների մեջ՝ №№ 4, 5, 6. № 3 ավագանի և № 5 կուրի ավագանի մեջ:

Մրցության պայմաններն են՝ մեքենալի մեծ արտադրանք, ապրանքի խոտանի բացակայություն, կանոնների խախտման և գործալքումների բացակայություն՝ յերեք ամսվա ընթացքում:

Պրեմիա յետքում սահմանվում մեկը մանը կոկլեկտիվների համար՝ 150 ռուբլի և մեծ կոլեկտիվների համար՝ 250 ռուբլի:

### «ԿԱՐՄԻՐ ՌԱԶԲՈՐԿԱ»

«Կարմիր բազրորկայում» մրցությունը կազմակերպվում ե ջոկլեկտիվների մեջ՝ լավագույն աշխատա-

\*) Զիգեր-ներկանոթ:

վորուհու համար։ Բոլոր պայմանները կատարողը՝ յիշրեք տմսվա ընթացքում, պարզեատրվում և 50 ռուբրու պրեմիայով։ Յերկու պրեմիա յէ սահմանված։

Կարմիր թմբուկների ճոճանակների վրա մրցությունը կազմակերպվում է ճոճանակների մոտ աշխատող բանվորուհիների մեջ լավագույն տեսակավորողի (լավ խոտանը ջոկջլողի (ըրակովշչիցա) համար։

Ներկող թմբուկների համար սահմանվում է յերկու պրեմիա 20-ական ռուբլուց։

Դրվագարանում մրցում են կոլլեկտիվները. այն կոլլեկտիվը, վոր իրագործել և բոլոր պայմանները, կհամարվի լավագույնը և 100 ռուբլի պրեմիա կստանա։ Յեկա աշխատես մլուս ցեխերում։

\* \* \*

«Տրյոխգորկան» ընդարձակել և իր քարե շենքերը միքանի թաղամաս տարածությամբ։ Նրա բարձր պարիսպների յետեւում դաշտահների, մեքենաների մոտ ամեն որ հազարավոր բանվորներ են աշխատում։

«Տրյոխգորկան»—կոմքինատ։

Բամբակի հակերից, վոր կրում են դեպի նա անվերջ սալլերն ու քեռնատարները, «Տրյոխգորկայից» դուրս են գալիս խալտարզետ, ուրախ չթեր և գործվածքներ։

Այստեղ կա մանարան, վորտեղ բամբակը՝ միշտիք բաժիններից անցնելով—պատրաստականից մինչև վատերալինը\*), գառնում և նուրբ, ողիտակ թելեր, գործվածքի համար պիտանի։

\*.) Վատեր-մեցենա—մանող մեքենա։

Հետաքրքիր և հետեւել, թե ինչպես բամբակը բանկոքը<sup>\*</sup>) բաժնում, անցնելով զանազան մեքենաների կոմպլեկտաներից, հաստ ժամանակից դառնում և ամուր, նուրբ թել:

Այստեղ կա և՝ ջուլհականոց, վորտեղ հոգատոր ջուլհակու հիներն ամեն որ հարյուրավոր մեար դործվածք են գործում:

Զուլհականոցից պատրաստի ապրանքն ընկնում և չթի ֆարբիկան, վորտեղ տպիչ մեքենաներով ներկվում և, նկարագրավում, ապա անցնում մի շարք թմբուկներով չորանոցի, ոճառի, ընկնում տեսակավորման տեղը, պահեստարան, հետո հասնում յեզերքները կարողներին և վերջապես դարսվում և շքեղ կը տորից պատրաստված հակերի մեջ:

Բանկոքը բաժնում խառացման մասին խոսք լինել չի կարող: Այստեղ դազգահին մի բանվորուհի կա: Ինչ ել անես, դազգահն առանց բանվորուհու բաց չես թողնի: Բայց այստեղ ել հենց վոր մըցման մտան, բանկոքը շնորհին մեկեն բարձրացրին արտադրությունը և նվազեցրին «բացթողումը»:

Մանարանի բաժնում, վորտեղ կարգավորված՝ ճշտորեն դասավորված մեքենաները յերկայն շարքով կանգնած են, ամեն մի մեքենան յերկու կողմ ունի:

Ամեն մի կողմից ներքենում պատշաճ կերպով շարվել են յերկու հարյուր ճախարակ, վորոնց վրա կծկվում են մանածի վերեից վազող թելերը:

Բանկոքը գործն և հսկել, վոր թելը չկտրվի, ի ոկ յեթե կտրվի, պետք և կցի: Պետք և փոխի իլիկ-

) Բանկոքը՝ նախաման մեքենա:

ները, յերբ նրանց վրա բավարար չափով թել եւ փաթաթվում։ Այդ ժամանակ վատերշշիցան կանգնեցնում է մեքենան, կանչում իր վերցնողին և նրա հետ միասին արագ-արագ վերցնում իլիկները, նրանց տեղը նորերը հազցնելով և ապա նորից բաց ե թողնում շարժիչը — մոտորը։

Մինչև մրցությունը ամեն մի վատերշշիցան աշխատում էր յերեք կողմի վրա և հսկում 600 ճախարակի։ Այժմ, մրցությունը հանձն առնելով, անցան 6 կողմի։

Այժմ ամեն մի վատերշշիցան 1200 ճախարակ ունի։ Հաղար յերկու հարյուր վաղող թելեր, վորոնց պետք և հետեւ կարողանալ ժամանակին փոխել Հեղտ աշխատանք չե։ Ո՞վ առաջինը իր վրա վերցրեց այդ գործն անելը։ Պետք ե ասել ուղղակի—կոմյերիտմիությունը։ Նա յեր, վոր տղջիկ-կոմյերիտմիներից հարվածային ըրիզադ կազմակերպեց, վորը ցույց տվեց մնացածներին, թե ինչպես պետք ե աշխատել։

Այժմ մանարանի բաժնում ամեն մի բանվորունի վեց կողմի վրա չե աշխատում։

Ցուրաքանչյուր 24 կողմի վրա կա մի աջակից բանվորունի-հանող և մի բանվորունի, վոր դադզյանների փոշին ու բամբակն ե սրբում։

Վեց կողմի անցումով մանող կանալք սկսեցին որական 14 կոպեկ ավելի աշխատել։

Այդպես են պալքարում տրվոխգործիները արժեքի իջեցման համար։

Բոլոր բանվորները տոգորված են մրցությամբ. այդ բանն առանձնապես նկատելի լե շտաբում, ուր ամեն ըոպե նորանոր տեղեկություններ են գալիս։

Ահա բջիջի սենլակն ե ընկնում վաղեվաղ, հետով սի կոմյերիտունի: Արագ վաղքից նրա վարսերը գլխակապի տակից դուրս են ընկել:

— Լսիր, լսիր, — դիմում ե նու քարտուղարին. — ախր աւս թնչ բան ե. մենք աղջիկներով ուղեցինք կծկելու բաժնում հարվածային բրիգագ կազմակերպել և 40 կռմից 50 ի անցնել: Վերատեսուչն արդեն իր համաձայնությունը տվել ե, և հանկարծ վարպետն այնտեղ պառավեր դրեց \*), իսկ նրանք այնքան ծեր են, վոր ժամանակն ե «սոցապին» հանձնել ի՞նչպես կարող են նրանք խտացում տանել. մինչդեռ մենք ուղղում եյինք գործի կազել ինչ պետք ե անել. միթե այդպիս կմըցեն:

Վշտից խեղճ աղջիկը քիչ եր մնում լաց լինի:

Քարտուղարի սենլակը մըցության գլխավոր շտարըն ե և ամեն որ, ժամ, ըոպե նոր լուրեր են բերում՝ այսոր չթի ֆարբիկալում, թմրկավոր մեքենաների վրա, վորտեղ 6 բանվոր եր աշխատում, սկսել են աշխատել միայն 5 հոգի:

— Ռակլիստ Սեմենովը մըցության կանչեց սակլիստ իվանովին:

— Յեղերքները կարող նոդովիցինան՝ սովորական 379 կտորի փոխարեն, այսոր 447 կտոր ե պատրաստել:

Այդպիսի զեկուցումներ ամեն ծալրից թոշում են զեղի այդ փոքրիկ սենյակը և առաջ են բերում այն

\* ) Սոցիալական ապահովությունը, վոր արվում ե շատ ծերացած բանվորներին, իսկ ներկայումս՝ նույն գյուղացիների միաւնիք կառեգորիաներին:

աշխատանքային վերելքը, վոր բռնել և ամբողջ Փաք-  
ըիկան:

Մըսությամբ ինչ են վաստակում տրլոխգործի-  
ները:

— Բացի լերկրին ոգնելու ընդհանուր ցանկու-  
թյունից, բացի իրենց Փաքրիկաներն ու գործարան-  
ներն ամբացնելու ձգառումից, նրանցից ամեն մեկն  
զգալի շահ կստանա:

Հստ ծրագրի, «Տրյոխգորկալի» ամեն մի բան-  
վոր մրցության վերջերին այժմյան ստացած որական  
2 ռ. 75 կոպեկի փոխարեն կստանա 3 ռ. 14 կոպեկ:

Սակայն տրյոխգործիների համար այդ դեռ քիչ  
է, վոր իրենց Փաքրիկայումն են մրցում: Նրանք դեռ  
չեն բավականանում, վոր «Պրոլետարկալին» հրավի-  
րեցին: Բացի դրանից տրլոխգործիները կամենսկու-  
թղթի Փաքրիկալի հրավերն ել ընդունեցին:

1929 թվականի ապրիլի 11-ին «Տրլոխգորկալի»  
բանվորները հրավերին պատասխան-նամակ ուղար-  
կեցին կամենկա: «Մենք, Տրլոխգորնիի մանուֆակ-  
տուրալի ջուրհակալին Փաքրիկալի բանվորներս, ծա-  
նոթացանք ձեր նվաճումներին և հայտարարում ենք,  
վոր մեր աշխատանքում ինքնարժեքի իջեցման վերա-  
բերությամբ ձեր որինակին կհետենք: Առ 1-ն մայիսի  
մենք կիջեցնենք խոտանն ու ուղարը \*) յերկու  
անգամ այժմյանի հանդեպ:

Ստորագրել են՝ ջուրհակունիներ Ֆեղորովտ,

Նիկոնդրովա, Կելոկատովա, Վոլորօղ Դյաչկով,

Շգնական-վարպետ՝ Մատվեյև:

\*) Ուղար—կըսի կօրուստը՝ մանածը պատրաստելիս:

## «ՊՐՈԼԵՏԱՐԿԱՆ» ՄՐՑՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Իվանովո-Վոզնեսենսկում ապրիլի 15-ին համարագողաքային բանվորական կոնֆերենցիա էր: Այնտեղ դեկուցում ելին տալիս այն պատգամավորները, վորոնք Տվեր ելին դնացել պայմանագիր ստորագրելու:

— Մենք բոլոր կազմակերպությունների համերաշխ աշխատանքը — ասում ե ինժեներ Խարացը: — տեխնիկական անձնակազմի և բանվորական մասսայի հազվագյուտ միություն: Այդ առանձնապիս ցալուուն կերպով արտահայտվեց այն ընդունելությամբ, վոր կոնֆերենցիայում գտավ չթի ֆարբիկալի տեխնիկական դեկավար ընկ. Բուրշեն:

Չնայելով առաջին լեռամսյակին հայթայիթման գժվարություններին, «Պրոլետարկան» կարողացավ ինքն իրեն շտկել: Վախում եմ, թե մայիսի մեկին նրանք լավ աշխատանքի այնպիսի թվեր տան, վորոնց մենք չկարողանանք հասնել: Մարտ ամսում արդեն նրանց մոտ խոտանը նորմայից ցածր եր: Տվերցիներն առայժմ մեղնից յետ են մեքենական արտադրություն մեջ: Սակայն տարակույս չկա, վոր այսանդ ել նրանք իրենց ուղածին կհասնեն: Այդ բանի գրավականն այն հսկայական միաճուղումն ե, վոր մենք տեսանք այնտեղ: Առանց արդպիսի ձուլման «Պերեկոպը» չես վերցնի:

— Մենք դիտում ելինք բանվորների այն հըսկայական միասնությունը, վորը կարելի յե համեմատել միայն հոկտեմբերյան որերի միասնության հետ, — ասում ե ընկ. Կորոբյովը: — Ամբողջ 19 հազար տվերցի պրոլետարներն ինչպիս մի մարդ դուրս յեկան մի-

տինգ-ցուլցի: Մեզ ապշեցրեց դարմանալի կազմակերպվածությունը: Կոնֆերենցիալում մեզ վիճակվեց կարմրել նրա համար, վոր նրանք ելին մեզ հրավիրում, այլ վոչ մենք՝ նրանց: Մենք տեսանք հսկայական վոգնորություն, վոր վարակել եր բանվորական բոլոր խավերը: Մենք տեսանք դործալքողների, վորոնք չերդվում եյին տուաջիկալում սրբել իրենց վրայից վատանունությունը: Մենք տեսանք ովացիան հնավուց զեղաղարդող-նկարչին—վկայություն մասնագետների և բանվորների միացման: Մենք լսեցինք տվերցիների կանչը՝ «Հայտարարում ենք ձեզ, իվանովցիներիդ, վոր Մոսկվայում մայիսմեկյան ցուցի ժամանակ ձեզ կվիճակվի մեր ծոծրակին նայել»: Մենք պատասխանեցինք իվանովցի մանվածագործների անունից, թե մեր տուաջադրությունը կիրագործենք: Իվանովցի բանվորների մասսային մնում ե գործով ապացուցել այդ:

— Այն վերելքը, վոր մենք տեսանք ցուցին, — ասում ե մանուֆակտուրայի վերատեսուչ ընկ. Կոնովալովը, — տեսանք նաև արտադրության մեջ: Դրոշակների և պլակատների խարազանող լողունդները տվերցիների մոտ իրականություն են դարձել:

— Ահա մի բնորոշ հանգամանք: Համբարություններով անցնելիս և աշխատավորների հետ զրուց անելու փորձ անելիս մեզ այսպես պատասխանեցին՝ խոսելու ժամանակ չունենք, աշխատել պետք և — պայմանագիրն ստորագրված ե:

Վարչատեխնիկական անձնակազմը ամբողջովին հետևյալ որն իսկ մորիկիզացիայի լենթարկվեց կոնֆերենցիալից հետո: Առանձնապես ապշեցրեց մեղ մտք-

բութլունն ու կարգը մեխանիկական համքարության մեջ, միանդամայն անհամեմատելի, ինչ վոր տեսնում ենք մեր Փարբիկաներում։ Չոր, խելացի աշխատավորական դիսցիպլինան մեխանիկական համքարության մեջ, արտադրության արդ սրտում, նույնպես աչքի ընկալի:

**Այսպես են խոսում իվանովցիների բանվորները ավելցիների մասին։**

**Ապա միտեսնենք, թե նրանց մոտ մըցությունն ինչպես ե կատարվում։**

— Մենք ինքներս մեզ չենք հավտում, թե ինչ նվաճումներ ենք անում, — ասում են բանվորները, — Այսպիսի դործակատարություն, ինչպես այժմ, մեղնում յերբեք չի յեղել։

Եեվ իրոք, Փարբիկան չեղած հաջողություններ ունեցավ։ Այս տարվա առաջին յեռամսյակում առաջադրված նորման 3 տոկոսվ թերակատար մնաց, և թըգում եր, թե անհնարին ե կատարել այն, իսկ այժմ չթի Փարբիկան՝ ըստ ծրագրի, պետք ե որական 618 հազար մետր տա, ըստ պայմանագրի նա պարտավորվել ե տալ որական 680 հազար մետր, ըայց արդեն մըցության առաջին որերում նա տվեց 940 հազար մետր։

**Մանարանն՝ ըստ ծրագրի, պետք ե տար որական 40.644 կիլոգրամ։ Ըստ պայմանագրի պարտավորվել ե տալ 41.170 կիլոգրամ և արդեն տալիս ե այդքան։ Զուհականոցը, վոր առաջին որերում թեթեգակի յետ եր մնում մըուսներից, այժմ՝ յերբ հաշվառման յենթարկեցին ամեն մի ջուղիակի աշխատանքը, սկսեց կատարել իր հանձն առած պարտավորությունը։**

— Թարրիկալում իջել և խոտանը, գրեթե բոլորովին վերացել մեքենաների կանգառումը, հարգելի պատճառով գործալքումները պակասել են, իսկ ինքնակամ թրեւ վումները բոլորովին դադարել են: Չթի Փարրիկայում բանվորների մեծ մասն ուշանում եր 10 րոպե: Մըրցության ժամանակ սկսեցին տախտակի վրա կախել ուշացողների անունները: Ալդ բանն այսպես ազդեց, վոր ցուցակագրությունից հետո առաջին որն ուշացել ելին ընդամենը 56 մարդ, յերկրորդ որն ել ավելի պակաս, և հետո ուշացումները բոլորովին դադարեցին:

«Պրոլետարկայի» բանվորներն ի՞նչպես ձեռք բերին ալդ հաջողությունները: Զե վոր վաղուց չե, վոր նրանց արտադրական ծրագիրը Յ տոկոսով թերակատար եր մնացել:

Ամեն ինչ սկսվեց չթի Փարրիկայից, վորը «Պրոլետարկալում» ամենից հետամնացն եր համարվում: Ցեվ ահա հենց ալդ հետամնաց Փարրիկան առաջինը մրցության մեջ մտավ և իր թիկունքումը թողեց մյուսներին: Բանվոր Բողդանովը համոզեց իր հերթակիններին մրցության կանչել յերկրորդ հերթի բանվորներին: Այդ յեղավ սկիզբը: Նրա յետեից տեսակավորող Մարիա Ստեփանովան կանչեց իր հարեանուհիներին: Մինչև այդ նա տեսակավորում եր որական 200 կտոր, սակայն մրցության հենց առաջին որը նա արեց 320: Առաջին հրավերներից մրցությունը հեռուներն անցավ: Կարուհի Գորոխովան որական 750 կտոր եր պատրաստում: Նա մրցավագք հնարից կարուհի Տետերինալի հետ, և սկսվեց տեխնդագին աշխատանքը: Գորոխովան առաջին որը պատրաստեց 95 կտոր, Տետերինան՝ 951:

Ցերկրորդ որը Գորոխովան 980 կտոր պատրաստեց, իսկ Տետերինան հավաքեց իր բոլոր ուժերը և այնպիսի մի թռիչք գործեց, վոր ամենքը բերանբաց մնացին. Նա պատրաստեց 1027 կտոր:

«Տրլոխորկային հետ պայման ստորագրել եր վատերշչիցա Տավրունովան։ Նա արդեն չի կարող որինակ չհանդիսանալ մյուսների համար։ Այժմ ել՝ յերբ բանվորուհիները պատրաստում են 70—73 կիլոգրամ, նա պատրաստում ե 87—88 կիլոգրամ։ Բայց «Պրոլետարկայի» բանվորուհիները դժվար թե թույլ տան, վոր մեկն ու մեկը աչքի ընկնի։

Նայեցին նրանք, նայեցին Տավրունովային ու իրենք ել սկսեցին որական 90 կիլոգրամ պատրաստել։ Ասածինները, վոր անցան Տավրունովային, 315 և 325-րդ մեքենաների բանվորուհիներն եյին. Նրանց յետեկց գնացին և ուրիշները. Յեզ այնպիսի սրցավագք ե գնում ֆարբիկայում, վոր բանվորուհիները վոչ միայն հրաժարվեցին վորեւ զրույցից աշխատանքի ժամանակ, այլ մի բան գիտեն միայն, թե հասնում են իրենց ոգնականներին։

— Ե՞ս, իլիկ հանող, շուտ արա, ի՞նչ ես ալդքան ժամանակ շուտ ու մուտ գալիս։

Առավոտները մտեք միջանցքը, վորտեղ կախված են տախտակներ ամենորյա աշխատանքի թվերով։ Այնտեղ աշխատանքից առաջ և դադարի ժամանակ խոնվում են բանվորուհիները. Աշխատելով սողոսկել տախտակներին ավելի մոտ, բոթքոթում են իրար, իրար վրա բարձրանում, իսկ բախտավորը, վոր առաջ և սպրդել իր մեքենալի պատրաստածն և վորոնում և համեմատում ուրիշների պատրաստածի հետ։

Յեզ ի՞նչպես հն նախանձում նրան, ում պատրաստածն այդ որը բարձր ե:

— Ե՞ն, սպասիր, Մարիս, ամեն որ տառը գաթաչի ուտի, թերես վաղը լես առաջ անցնեմ:

325-րդ մեքենայի բանվորուհին քիչ և մնում լաց լինի: Ախր այս ի՞նչ բան ե, չես ուրիշներից ավելի վատ չեմ աշխատում, մինչդեռ իմ պատրաստածը միշտ ցածր ե: Վարպետ, ի՞նչ կլինի, վոր իմ մեքենան ավելի շուտ բաց թողնես, — կպչում ե նա հասակավոր, հանգիստ վարպետին, վորը կանգնած ե այդտեղ, բարեսրտությամբ ծիծաղելով մրցության տեսնով բռնված բանվորուհիների վրա:

Այդպես և մանարանում: Զուլհականոցում խաղաղ ե: Այնտեղ ամեն մի մեքենայի կատարած դործի առանձին հաշվառում չկա, ուստի և չի կարելի մեկմեկի մրցության հրավիրել: Կաշվից դուրս են գալիս ջուլհակուհիները, վորպեսդի իրենց համար անհատական հաշվառում կատարվի: Նրանց պահանջի հետեանքով ապրիլի 15-ին այդ հաշվառումը մտցրին: Ստկայն ջուլհականոցում աչքի լեն ընկնում շոհողները, զատոնները, տեսակավորուղները, վորոնք կանչում են իրար: Տեսակավորող կուղնեցովան հրավիրեց ամբողջ բաժնին հետեւել իր որինակին: Վեց որ մասնակցում և նա մրցությանը և ամեն որ նախորդ որդանից 10 կտոր ավելի յե պատրաստում:

Վատ ե այն, վոր կինբաժնի պատգամավորուհիներն որինակ չեն հանդիսանում: Մարուաա Պետուշկովան, Սոլովյովան, Զերնոուսովան ինքնըստինքյան հիանալի լեն աշխատում, բաց բանն այն ե, վոր ուրիշներին մրցության կանչելուց վախենում են:

— Յես ուզում ելի մեր համքարտթյան մեջ միակ կուսակցական կոչուրովային կանչել, վորը յետ է ընկնում, բայց վախենում եմ, կարողներն ինձ կզզզեն։ Յեվ այդպես բոլորը հայութում են։

— Ո՞ւր հս քշում, — ասում են նրանք, — դու միայն այն հս ուզում, վոր քեզ դովեն, — դանգատվում ե Մարուսան։

Սակայն բանվորուհիների ընդհանուր մասսավի մեջ, վորոնք մրցության տենգով են բռնված, վորոնք վորքան կարելի յի շատ գործ անելու միակ մտքով են տարված, — այդ զեղքը յեղակի յեւ։

Մինչև իսկ տեխնիկական անձնակազմն ու վարչությունը բանվորներից յետ չեն մնում։ Յենթավարպետ Կուլասովը ջուլհականոցում հրավիրեց բոլոր յենթավարպետներին մեքենաների մեջ տեղի ունեցող թրութիմացությունները վերացնելու, վորոնք խանգարում են կանոնավոր աշխատանքը։ Այժմ մրցման և մտել տնտրաժինը։ Նա առանձապես հիվանդ կողմեր շատ ունի։ Այս տարվա 5 ամսվա ընթացքում խելոքություն և համարել ինչ վոր անհայտ ճանապարհներով 116 հազար ոռուքի գերածախս անել։ Մրցության մեջ մտան, և տնտրաժինը վաստակեց։ Արտակարգ կերպով ստուգեցին, թե ինչ բանի վրա յեւ գնացել գերածախսը, ծրագիր մշակեցին, թե ինչպես պետք ե ծախսել, վորպեսզի վոչ միայն նախահաշվում ամփոփվեն, այլև խնայողություն անեն։ Տեղացին բանվորների առաջարկները, սկսվեցին մրցության հրավերները մթերքի տնտեսության, հաշվական գործերի ուցիւոնալացման վերաբերմամբ և այն մասին, թե գույքը պահպանելու ավելի ուղիղ ճանապարհը վհըն եւ իսկ

վերջին որերս բացվեց մի բոլորովին նոր, չտեսնված բան. մըցության մեջ են մտել տնային տնտեսուհիները:

— Մեր ամուսիններն ինչու յեն թրե դալիս: Վորովիհետեւ հարբում են: Իսկ յեթե չեն ել թրե դալիս, ախուամենալիվ դինովսությունից նրանց աշխատանքի արտադրողականությունը վատ ե: Միթե նրանց աշխատանքի վրա չի անդրադառնում պիխացավը, վոր հետևանք և կազարմաների խեղդուկ ոդի: Ուստի մենք մըցություն ենք հայտարարում կազարմաներին և հարկերին՝ խոհանոցների և միջանցքների մաքրության համար, և նրա համար, վոր շենքումը լվացքաջուր չինի, և տոնական որերի հարբեցողության դեմ պարքարելու համար:

Ալգանս հայտարարեցին № 118 կազարմալի տընտեսուհիները:

118-րդի հրավերին արձագանք տվեց 17-րդը: Տնտեսուհիների՝ հարբեցողության դեմ պալքարելու նպատակով զատկին յերեխաների լերթ կազմակերպեցին: Կազարմաներում սկսված մըցությունը վկայում է, վոր արշավի յելան մեր կյանքի ամենահետամուաց անկյունի — կազարմայական կենցաղի դեմ: Այդ մի ավելորդ անգամ ել վկայում է, թե մըցությունը բանվորուհուն մոտիկ ե և հասկանալի:

Սուկայն «Պրոլետարկայի» բանվորուհիներին քիչ ե դալիս, վոր իրենք լարված ուժերով աշխատում են համքարություններում, չեն բավականանում, վոր կազարման շարժվեց, ալլև վճռեցին ֆարբիկալի կեղտոտ պատերին և լուսամուտներին ստիպել փայլել: Ալժմ մանարաններում թափթփված չկան վոչ մի ցըն-

ցոտու թել, վոչ մի ավելորդություն։ Մանողներն ուրական յերեք անգամ հատակներն ավլում են։ Բանվորունիները զատկին կիրակնորյակ կազմեցին, իրենց ֆարբիկալի յերեք հարկերում պատերն ու լուսամուտները լվացին, պատեր ու լուսամուտներ, վորոնք իրենց հիմնադրության որից ջուր չելին տեսել։

— Մենք մերն ենք, մենք նոր աշխարհ կկառուցենք — յերգվում ե յերգում . . . ահա մենք կառուցում ենք — լրջորեն ասում ե մի ջահել աղջիկ՝ վատերշշինաների կոմլեքտական կոմպլեկտից։

Յեզ՝ ի հաստատություն նրա խոսքերի, պատերից նրան և նայում նվաճումների տախտակը։

## ԳՅՈՒՂԸ ՀՐԱՎԻՐԵՑ -ԱՄՐԱՑԵՔ, ՏՆԵՐԻ

Իվանովյում № 2 ջուհականոցը փոքր ֆարբեկա յե համարվում։

Նա կանգնած ե դետափին, կամուրջի մոտ։ Փողոցով անցնես — չես տեսնի։

Սակայն այդ փոքր ֆարբիկան առաջինն յեղավ, վոր իր մըցությունը դյուզի հետ կապեց։

Ամենքին հասկանալի յե։ Ֆարբիկան ուզում ե դյուզին ավելի եժան և ավելի լավ չիթ տալ։ Իրահամար ել բանվորները ջանք են թափում։ Իհարկե, դյուզն ել իր գործը պետք ե ավելի լավ տանի։

Այդ ամենը այդպես ել յեղավ։

Կոստրոմայի նահանգում Սելցո անունով մի փոքր գյուղ կա։

Նրանց գործը վատ ե դրված բազմադաշտան խոտացանի անցնելիս։ Այնտեղ կա յերիտասարդ գեղ-

ջուկների մի խումբ, վորոնք քաղաք ելին գնում աշ-  
խատանքի, լինում եյին ուրիշ գյուղերում։ Նրանք են,  
վոր հասկանում են կուտուրական տնտեսության  
ոգուտը։

Յեզ ահա, գյուղական ժողովում վորոշեցին նա-  
մակ ուղարկել Խվանովո-Վողնեսենսկ և մրցման հրա-  
վիրել ջուրհակային ֆաբրիկային։

Նամակը գրված եր պարզ և համոզեցուցիչ։

«Մենք, Սելցո գյուղի գյուղացիներս, ձեզ մըրց-  
ման ենք հրավիրում։ Մենք ձեզ խոսք ենք տալիս  
դաշտերի բերքատվությունը բարձրացնել և մտցնել  
կուլտուրական տնտեսություն՝ գյուղատնտեսի միջո-  
ցով։ Խսկ ձեղանից պահանջում ենք ավելի լավ և ա-  
վելի եժան չիթ։»

### Սելցո գյուղի գյուղացիք»

Ապրիլի 13-ին գյուղացիների հրավիրակ-նամակը  
բանվորների ընդհանուր ժողովումը կարգացվեց։

Մի փոքր զարմանք պատճառեց բանվորներին,  
թե ինչու գյուղն ե կանչում նրանց։

— Մենք Բնչակես մրցենք նրա հետ։

Սակայն, մյուս կողմից, այդ ստիպեց ըոլորին  
ավելի լուրջ վերաբերվել մրցությանը։

Դուրս լեկավ բանվորուհի Միակուխինան։

— Գյուղացիների հրավերը մենք պետք ե ըն-  
դունենք և կատարենք բոլոր պայմանները։

Բանվորների մի ամբողջ շարք — Ստարցևան, Ֆուր-  
սովը, Մատվեյկը, Կուրիցինը առաջարկություններով  
ելին դուրս գալիս, թե հրավերը պետք ե ընդունել։

— Մեր ֆաբրիկան յետ և մասել ապրանքն եժա-  
նացնելու ծրագիրն իրագործելու մեջ։ Մենք պետք ե-

տնտեսելինք 495 հազար ռուբլի, մինչդեռ նույնիսկ կեսն ել չենք արել: Այնուամենաւինիվ հրավերից չպետք է վախենալ, մենք պետք ե մեզ հավաքենք և կհավաքենք:

Այդպես ելին խոսում բոլոր հանդես լեկողները, նույն այդ ժողովում ընտրեցին յերեք բանվորի – Աշլեքսեյենկոյին, Ստարցեին և Պետրովին, վորոնք գյուղը դնացին գյուղացիների հետ ոլայմանագիր ստորագրելու:

Պայմանագիրը տարան իրենց հետ:

Խվանովո-Վոզնեսենսկի ջուլիակային և 2 ֆաբրիկայի բանվորների պայմանագիրը Կոստրոմայի նահանգի Սելցո գյուղի գյուղացիների հետ

— Ընկեր գյուղացիներ, մենք և գուք ընդհանուր տնտեսական խնդիրներ ունենք: Մեկընդհանուր դասակարգակին թշնամի: Մենք հաստատապես համոզված ենք, վոր աշխատանքալին ճակատում մենք հաղթանակ տանել կարող ենք միայն կոմմունիստական կուսակցության ղեկավարությամբ: Միայն աշխատավորների ուժերի լարման ճանապարհով:

Ուստի մենք վողջունում ենք մեզ հետ միասին տշխատելու ձեր ցանկությունը յերկրի ամրացման համար:

Քննության առնելով ձեր հրավերը, մենք ընդունում ենք այն հետեւյալ պայմաններով.

Մենք ձեզ պրոլետարական խոսք ենք տալիս՝ այս տարվա ընթացքում արտադրողականությունը բարձրացնել 11 տոկոսով, խոտանը 8 տոկոսից իջեց-

նել 4-ի, Առեջքի ուգարը իջեցնել կիսով չափ, իսկ  
ասպինը՝ յերեք անգամ:

Խոստանում ենք բոլորովին վերջ տալ գործա-  
լքութերին, նվազեցնել այդ յերկու անգամ:

Պարտավորվում ենք ֆարրիկայում հաշվառում  
մացնել ամեն մի դաշտանի աշխատանքի համար և,  
բացի գրանից, ապրանքի արժեքը ոուրլուն ՞ կոպե-  
կով կիջեցնենք, այսինքն ՞ տոկոս:

Ձեզնից, ընկեր գյուղացիներ, մենք պահանջում  
ենք, վոր դուք վոչ թե 18 հեկտար վշացանքի պայ-  
ման կապելիք, ինչպես վոր կանխանշված և ծրագրով,  
այլ 30 հեկտարի, վորի մեջ 5 հեկտար հասարակա-  
կան վար:

Կոլլեկտիվի վարած հողի լեկամտով դուք պետք  
ե գլուղատնտեսական մեքենաներ ձեռք բերեք և, բացի  
դրանից, դուք պետք ե հողի հոգատար մշակությամբ  
դաշտերի բերքատվությունը բարձրացնեք յոթ տոկո-  
սով:

Պայմանագիրն ընդունեցին և ստորագրեցին:

Բանվորների և գլուղացիների պայմանագիրն  
ստորագրվելուց հետո համքարություններում սկսե-  
ցին խոստացվածը կատարել:

Հենց նրանից, թե ինչպես են շտապում բանվոր-  
ները դեպի ֆաբրիկա, ինչպես են համքարություննե-  
րի պատերը պլակատներով և գիազրամմաներով դար-  
դարում, ընդիջութեաներին ինչպիսի ազահությամբ են  
կարդացվում լրադրերը, ինչպես են խոնվում բանվոր-  
ներն աշխատանքի թվերով լեցուն տախտակների  
մոտ, այդ ամենից իսկուն կարելի յե գուշակել, վոր  
ֆաբրիկայում ինչ-վոր անսովոր բան և կատարվում:

Մատեք բջիջը, Փաբկոմը, անցեք համքարությունները: Դուք ինքներդ կըսնվեք այդ փութկոտությումը և աշխատանքի տեսնդով:

Բոլոր բանվորներն ու բանվորուհիները տարգած են մեկ մտքով—զյուղացիներին արված խոստումը կատարել:

Զուլհականոցի նոր կորպուս: Այնտեղ են վերջերս բորսալից կուտակված բանվորուհիները: Նրանց մեջ շատ զեղջկուհիներ կան: Անձեռնհաս են: Նորերս են դրված գաղղահների վրա: Նրանք առաջադրված աշխատանքի նորմալի միայն 50 տոկոսն ելին տալիս: Այժմ նրանք տոգորված են մի ցանկությամբ—զյուղի առջև չխայտառակվել նրանք առաջին շաբթին սկսեցին պատրաստել որական 88 տոկոս:

Կանցնեն ելի մի յերկու շաբաթ, և նրանք նորմալից կանցնեն:

Նախապատրաստական բաժինն սկսեց մթերքների խնայողություն անել: Բայց այդ նրանց քիչ եր, վոր գյուղացիների հրավերն ընդունեցին: Իրենց հերթին նրանք մրցության կանչեցին «Զարյադիյի» № 1 ջուլհականոցին:

Վոչ մի Փաբրիկա չպետք է լինի, վոր բանված չինի մրցությամբ:

## «ԶԱՐՅԱԴԵ» ՖԱԲՐԻԿԱՆ

Ավելի ճիշտ, այդ Փաբրիկա չե: Այդ կոմքինատե: Այստեղ կա և՛ մանարան, և՛ ջուլհականոց, և՛ ներկարան: Մինչև այժմ Փաբրիկայում ապրում եյին խաղաղ, հանգիստ: 8 ժամ աշխատեցին, հհ, լավ: Բոլոր

բանվորուհիներն աշխատում ելին յերկու յերեք դադարահի վրա: Թելը տեղը կդնեն, շարժիչը բաց կթողնեն ու ինստեն, ձեռները փորերին դրած: Իսկ ով ջահել է, լրագիր եր կաբում:

Բայց հենց վոր հրավեր ստացան № 2 ջուլհականոցից, և կոմյերիտմիությունը կազմակերպեց առաջին բրիգադը 48 դադարահով, և բրիգադի կոմիսրիտուհիներից ամեն մեկն սկսեց աշխատել 4 դադարահի վրա, այստեղ արդեն գործն ուրիշ կերպարանք ստացավ:

Անսովոր լինելուց, ինարկե, դժվար եր մի դադարահից մլուսին վազելը: Ընդ սմին ամբողջ ջուլհականին ֆարբիկայում դադարահի արագությունը 10 հարվածով ավելացրին ամեն մի ըոսելիին: Առաջին որը շարժիչները մի գլուխ փշանում ելին: Ցենթավարպետները վազում են, քափ ու քրտինք են մտել, բոլորը թրջված եյին:

Վերատեսուչն իեկավ ջուլհականոց նայելու, ուղեց հարցնել վարպետին, թե ինչպես են գնում նրա գործերը: Նա միայն ձեռքը շարժեց.

— Ժամանակ չունեմ, հետո արի:

Այդպես եր առաջին որը:

Բայց յերկրորդ որն արդեն գործը լավ գնաց: 4 դադարահի վրա դրված կոմյերիտուհիները վճռեցին ապացուցել, թե իրենք ուրիշներից ավելի լավ են աշխատում: Այստեղ արդեն լրագիր կարդալու մասին խոսք լինել չեր կարող: Զորս դադարահը մեծ հոգատարություն են պահանջում: Աղջիկների կարմիր վարսականերն անդադար խոնարհվում են դեպի դադարահները, ճարպիկ ձեռքերն ավելի տրագ են պսպղում:

Մքուքը կոճի հետ յեզերքներից նետվում և գաղղահնու  
ու լետ գալիս:

Առաջին իսկ որը ջուլհականոցը 97 կտոր ավելի  
տվեց, քան առաջ եր տալիս: Իսկ վորմակը՝ Այսպիսի  
ուշադրությամբ են աշխատում ջուլհակուհիները, վոր  
այդ որը խոտանը յերեք անգամ ավելի պակաս եր,  
քան միշտ:

Առաջին ըրիգադի յետեկից կազմակերպվեց յերկու-  
րորդը՝ կինբաժնի պատգամավորուհիներից: Այստեղ  
արդեն աշխատանքը գնաց ամբողջ թափով:

Մի որ աղջիկներն ավելի լեն պատրաստում,  
միուս որը պատգամավորուհիները նրանց անցնում են:  
Ինչ ծիծառ՝ ջուլհականոցում:

Իսկ համբարության լիազորը շըջում ու գրում և  
այն տախտակի վրա, վոր կախել են համբարության  
մուտքի մոտ:

— Կոմիերիտական բրիգադը պատրաստել և ալ-  
սոր 1800 կտոր, իսկ պատգամավորականը՝ 1700:

Ընդմիջումին բանվորուհիները մոտենում են  
տախտակին և սկսում են իրար ձեռք տռնել:

— Ա՛յ, կտեսնենք, թե ով ումից կանցնի:

— Ա՛յ, կնիկներ, այդ ինչպես ե, վոր դուք աղ-  
ջիկներից լետ եք մնում: Պետք ե հասնել:

Իսկ աղջիկներին ասում են՝

— Այդ ինչ ե, աղջկունք, կարծես կնիկ լինեք:  
Զե՞ վոր դուք ավելի ջահել եք:

Նրանք ել միշտ պատրաստ են աշխատել: Թշում  
են թափով: Յեզ ինչ եք կարծում: Մի շաբթից հետո  
մի բրիգադ ել յերեաց: Հետո՝ ելի ու ելի: Յեզ այդ-  
պես ամբողջ Փարբիկան բրիգադների բաժանվեց: Այս-

սիեղ արդեն միանգամայն լեռում գալարվում են ջուլ-  
հակուհիները: Նույնիսկ կարծես ֆարբիկան տյն չե:  
Հատակի վրա մի աղբափսոր անգամ չես գտնի: Բու-  
լոր կոճերն ու իլիկները ճշտապահորեն դարսված են  
արկղների մեջ: Կտորտանքը նույնպես իրենց տեղումն  
են: Կիրակի ջուլհակուհիները հավաքվեցին ֆարբի-  
կան լվանալու: Առաջին անգամ պատերն ու լուսա-  
մուտներն իմացան, թե ինչ և ոճառ ու մոչալկա: Լը-  
վացին դռները, հատակները, դազգլահները մի լավ  
սրբեցին: Դազգլահներն այնպիսի խնամքով և սիրով  
եյին սրբում, ինչպես հարազատ յերեխային:

Իսկ Մարիամը, ջուլհակուհին, ուղղակի ինքն  
իրեն խոսում եւ:

— Ախ, դու իմ դազգլահիկս, անձկալիս, սնուցող  
հալլրիկս:

Մըցությունը թափով տիրել ե ջուլհակուհիներին:  
Հերթափոխությունը վերջացրեց, տուն և գնում, իսկ  
գլխումը պտտվում եւ:

— Վաղը մվ մւմը կանցնի:

Առավոտներն ավելի վաղ ֆարբիկա յե վազում,  
վոր չուշանա: Գործալքումները շատ ավելի յեն պա-  
կասել: Զուլհականոցում ընդամենը մոտ հազար հոգի  
ջուլհակուհի կա: Ամեն որ մոտավորապես 8 հոգի  
աշխատանքի չեր գնում: Ինչ-վոր տեղ դնաց իր գոր-  
ծերով: Յերբեմն ել առանց վորմե գործի: Հենց այն-  
պես, քնած կմնա կամ կծուլանա: Բայց հենց վոր  
մըցությունն սկսվեց, և բրիգադներ կազմակերպվեցին,  
այստեղ արդեն բոլորովին ուրիշ բան յեղավ: Ամբողջ  
շաբաթվա ընթացքում վոչ մի գործալքում չի յեղել:  
Վարպետն ուղիղ վերատեսչի մոտ գնաց:

— Իվան Գրիգորյեիչ, այս ի՞նչ ե կատարվում մեզանում։ Պարզ ասած, ամեն ինչ լուղի պես ե հոսում։ Շարաթվա ընթացքում վոչ մեկի չեմ հանդիմանել։ Մաքրություն։ Ճշտապահություն։

Հնավուրց վարպետ ե Յեգոր Պետրովիչը։ Շատ բան ե տեսել նա։ Առաջ, մինչև հեղափոխությունը նույնպես լինում եյին ուժերի հավաքումներ։

Որինակի համար ասենք։ Ֆարբիկանաներ Գորելիններն ու Բուրիլիններն սկսում են իրար հետ մրցել։

— Մի ավելի եժան չիթ ե պատրաստում։

Իրենք անձամբ վոչինչ չեն անում, իսկ բանվորներին սկսում են սեղմել։

Մի ավելորդ կես ժամ ավելացնում են հերթափոխության վրա։ Յեզ լեթե որական 50 կտոր ելին պատրաստում, ստիպում են 52 պատրաստել նույն արժեքով։

Ծանր եր բանվորների դրությունը, բայց կուչ ելին գալիս, ձգվում ելին։

Ումն ե հաճելի ֆարբիկալի դարպասից դուրս գալ տուանց աշխատանքի։

Վարպետն ալդ ամենը հիշում ե այն ժամանակ ել հասկանում եր, թե կարիքն եր ստիպում, ուստի ե քշում ելին։

Իսկ ալժմ անհասկանալի չե իրեն։ Ինչու ալդպես աշխատում են ջուլհակուհիները։ Զե վոր նրանց վոչվոք չի ստիպում։ Վոչվոք չի քշում, — բայց վոչ, տհա ալդ անիծած կնանիք — նրանց ձեռքից հանդիսատ չկա։ Հենց վոր դազգահը փչանում ե, գլխապատառ վազում ե վարպետին, և այնպես ել բզավում ե առանց վորեն հարգանքի։

— Պետրովիչ, այ Պետրովիչ, ի՞նչ ես կանգնել,  
արի ուղղիր, դե շուտ արա:

— Կնիկ ասածդ համբերություն չունի, — բարկա-  
նում ե վարպետը. յենթավարպետներն ել դժգոհ են:  
Անցավ նրանց լերջանիկ կյանքը:

Պատահում եր, վոր դեռ մինչև շչակը կես ժամ  
կա, իսկ նրանք ձեռքերը լվանում, գնում են բակը  
մանդալու:

Ցեթե դեպք լիներ՝ շչակից կես ժամ տուաջ դազ-  
գիանը փչանար, վոչվոք չեր ուղղի:

Ասենք, ինարկե, մինչև մրցությունը պատահում  
եր՝ ջուլհակուհիներն առանձնապես չեյին ել հետաքըր-  
քըրվում, թե դազգյանը կանգնած ե, թե վոչ:

«Զարյադյեյում» նրանք որավարձ ելին ստանում,  
բայց լերբ վարձատրությունը գործարքային դար-  
ձըրին, այստեղ արդեն ամեն մի րոպեն նրանց համար  
թանգ եր:

Ցենթավարպետը կոմպլեկտի հետ ծխելու գնաց  
և քսան ու հինգ րոպե ել կորավ, հենց այդ ժամանակ  
լերկու ջուլհակուհու դազգյանները կոտրվեցին:

Ցեվ նրանք նրան այնպիսի դաս տվին, վոր նա  
ուրախ յեղավ, վոր գնացել ե:

— Լոեցեք, անսպեռներ, այ քեզ պատիժ, — ասում  
ե նա:

Այնուամենայնիվ յենթավարպետները հավաքե-  
ցին իրենց, չվազեցին: Նույնիսկ ամեն մեկի մեջ  
հպարտությունը շարժվեց: Մեկը մէուսի առջև հպար-  
տանում եւ:

— Իմ կոմպլեկտն այսոր ավելի քիչ ե կանգնել,  
քան քոնց: Այսոր միայն 2 մեքենա յե փչացել, իսկ  
քեզ մոտ՝ Յ:

Նրանք ել ելի իրենց մրցումն ունեն:

Այսպես ամբողջ ջուլհականոցն աշխատեց— միկի  
մոռ լավ, մյուսին՝ ավելի լավ:

Եերկու շաբաթից հետո ամբողջ բակում մեծ  
ափիշաներ կպցըին:

## ԱՅՍՈՐ ԱԿՈՒՄԲՈՒԻԾ ՆՅԱՆԱԿՎԱՇ Ե

### ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Ո Ր Ե . Խ Ա . Ր Դ Ո Ւ Մ

1. Սոցիալիստական մրցման խնդիրը.
2. Զուլհակային Փարբիկալի հաշվետվու-  
թունը իր աշխատանքի մասին:

Զուլհակուհիների մասին շատերը շատ բան ելին  
լսել ուստի և ամեն մեկի համար հետաքրքիր և լսել  
մրցության մասին:

Հերթափոխությունից հետո ակումբի մեծ դահլիճը  
ծայրեծայր լիքն և բանվորներով, իսկ յետեից դա-  
լիս են ու գալիս նորերը:

Զուլհակուհիները նստած են առաջին շարքերում  
ինչպես տոնատերեր։ Մանողների վրա յերբեմն աչք  
են դցում։

Նախագահը զանգակը հնչեցրեց, և վերատեսուչն  
սկսեց խոսել Փարբիկալի դրության մասին։

— Ահա մենք այս տարի մի փոքր յետ ենք  
մնացել։ Մեղ առաջադրված եր ավելի շատ չիթ բաց-

թողնել, քան անցլաւ տարի և ռուբլուն 7 կոպեկով  
եժան, ըալց ահա մենք տրդեն կես տարի տշխատել  
ենք, բայց շարունակ նույն գնով ենք բաց թողնում:  
Յեկալ ալն ել, ինչ վոր մեզ պետք ե, չենք լրացնում:

Եերկար խոսեց վերատեսուչը, թե ինչու ալդպես  
լեղավէ Ալդտեղ հիշվեցին և' բանվորուհիների գործա-  
լըռումները, և' թե խոտան շատ են անում: Յեկ լենթա-  
վարպետները յերկար ժամանակ են կորցնում դազգլահ-  
ների նորոգության վրա—մեկ խոսքով՝ ալն ամենը  
չես կարող պատմել:

Նա վերջացրեց իր ճառը, ուղղվեց, ձեռքը բար-  
ձրացրեց, մեկնեց գեղի դահլիճը և ասում ե.

— Մենք պետք ե ալդ ամենը վերացնենք և կես  
տարում պետք ե հասցնենք, ինչ վոր չենք արել, և  
աշխատենք ավելի եժան չիթ տալ: Խսկ այժմ ջուլ-  
հակուհի Պետրովան կպատմի ձեղ, թե իրենք ինչպես  
են տանում մըցությունը ջուլհականոցում: Նրանք  
այս շարթին այնքան լավ են աշխատել, վոր 97 կտոր  
ավելի յեն պատրաստել, կեցցեն, նրանցից որինակ  
վերցրեք:

Բոլորը ծափահարեցին նրան, իսկ ջուլհակուհի-  
ներն այնքան վոգնորիվեցին, վոր բզավում են՝ ճիշտ ե,  
ճիշտ ե:

Պետրովան հենց վոր դուրս յեկավ, դւխաշորը  
շտկեց և սկսեց վրա տալ.

— Յես ամեն ինչ գիտեմ: Վերատեսուչը ճիշտ  
տապ, թե պետք ե ավելի եժանացնել չիթը: Մեզ  
մոտ համքարություններում ի՞նչ ե կատարվում: Մըթե  
այդպես են աշխատում: Պատրաստական բաժնում  
ի՞նչ ե կատարվում: Թող նրանք ինքները պատմեն

իրենց մասին, ներկարանից նույնպես թող արտահայտվեն, իսկ յես միայն իմ բաժնի՝ ջուլհականոցի մասին կպատմեմ:

— Ումն եր հանցանքը, վոր մեղ մոտ կեղտոտ  
եր, հատակը՝ թքոտ:

— Դազգահները կանդնել ելին, իսկ մենք զրուց  
եյինք անում: Շարունակ մեղքը մանածի վրա ելին  
դցում, աչքներս չփակենք, այժմ ել նույն մանածն ե  
մնայել:

— Իսկ վորտեղ ե խոտանը: Յես ձեղ հարց եմ  
տալիս, վորտեղ ե խոտանը: Ինչու մեղանում ավելի  
լավ ե պատրաստվում:

— Վորովհեռև սկսել ենք ավելի լավ աշխատել:  
Իսկ գրանից մեզ ի՞նչ շահ, վատ ե: Այ, ինձ մոտ ար-  
տադրությունը բարձրացել ե, և գործարքային ե: Յեվ  
յես ավելի աշխատավարձ կտանամ, ֆարբիկային ել  
շատ ոգուտե: Այս բանը չպետք ե մոռանալ ընկերներ:

— Յեվ հետո, յես առաջարկում եմ մեր ջուլհա-  
կային բաժնին մըցության կանչել մանարանին: Դեռ,  
լեկեք հանձն առնենք, կնիկներ:

Այստեղ արդեն դահլիճում մի անասելի աղմուկ  
բարձրացավ: Գոռում ե՝ ով ինչքան կարող ե: Մի  
փոքր հանդարտվեցին և սկսեցին արտահայտվել:

Իսկ թե դահլիճում ինչ ե կատարվում — ել ասելու  
չե: Քիչ և մնում ջուլհակուհիներն ու մանողներն  
իրար ծեծկոտեն:

— Մենք ձեղնից առաջ կանցնենք, բղավում են  
ջուլհակուհիները:

— Վհչ, մենք, — յետ չեն մնում մանողները:

— Ուրեմն, յեթե այդպես ե, — հայտարարում ե

Դրիգորյել, չթի Փաքրիկայի տպող բաժնի  
ռակլիստը, — մենք ել կմըցենք և սկիզբ դնելու համար  
մեր տպող մեքենան հրավիրում ե յերկու այլ ցեխի:

— Փաքրիկայի կոմիտեյի նախագահը մինչեւ իսկ  
վեր թուավ աթոռից:

— Ընկերներ, ընկերներ: Սկսենք կաղմակերպ-  
չորեն:

— Գրի, — գոռում ե քարտուղարին, — արձանա-  
գրության մեջ գրի, վոր ջուլհականոցը հրավիրում ե  
մանարանին և ներկարանին:

— Այդպես, այդպես, — թնդում ե դահլիճը:

— Իսկ յես առաջարկում եմ, — վորտեղից վորտեղ  
յետեի կողմից դուրս թուավ մի կոմիերիտուհի, ջուլ-  
հակուհի Սերգեյեան, — յես առաջարկում եմ մրցության  
կանչել Շուլսկու Փաքրիկային:

— Ճիշտ ե, աղջիկ, ճիշտ ե, — հաստատեցին ա-  
մենքը, — կանչենք Շուլսկուն:

Այսպես անցավ առաջին ժողովը «Զարյադյե»  
Փաքրիկայում մրցության մասին:

## ԵԼ ԱՎԵԼԻ ՄԵՔԵՆԱՆԵՐ ԲԱՑ ԹՈՂՆԵՆՔ ԳՅՈՒՂԻՆ

Լուրերեցկիյ գործարանը գյուղատնտեսական  
մեքենաներ ե պատրաստում — խոտհար մեքենա, հնձող  
մեքենա, խրձկապ, քամճար:

Այգտեղից են տարածվում գլուղեր ու ավաններ  
բարեձև, որինակելի մեքենաներ, վորոնք ամեն մի  
գյուղացու ցանկալի հյուրն են:

Կոլեկտիվ տնտեսություններն ամեն բանում

զրկում են իրենց, փող հավաքում մեքենա ձեռք բերելու համար:

Խանութում թե պահեստում, գնելուց առաջ, յերկար խնամքով տնտղում են այն ամեն կողմից, թխկթխկացնելով, ստուգելով վորակը:

Հետաքրքիր ե իմանալ, թե ինչպես են պատրաստվում մեքենաները, խոտհարի զանազան մասերը քանի բաժիններով են անցնում, մինչև հասնում են հավաքատեղին և այնտեղից դուրս են գալիս վորակես պատրաստ, փայլուն մեքենա:

Այժմ Լյուբերեցկի գործարանը մրցության մեջ ե մտել Կրամատորսկի մեքենաշինարարական գործարանի հետ:

Այդպիսի գործարանների մրցություն, այդ նշանակում է - մեքենաների նոր հազարյակներ գյուղին, գյուղական տների նոր հազարյակներ պետք ե դադարեցնեն կալումը հացահատիկ սաղելը, քամուն սպասելով, վորի փոխարեն պետք ե ուրախ չխկչիկաքամհարը, և միայն հասիր, վոր հացահատիկի մաքուր տեսակը թիակով յետ քաշես:

Մրցման մասին խոսելիս չի կարելի չպատմել թե ինչպես Լյուբերեցկի գործարանը 7-ժամկան ըանվորական որվան, աշխատանքի խտացման անցավ:

Դործարանը պետք ե 7 ժամվա անցներ 1928 թվականի հոկտեմբերի 1-ից: Բայց գործարանն այնքան մեծ եր և այնքան անբարեկարգ դրության մեջ, վոր հարկ յեղավ անցումն ելի հետաձգել կես տարով:

Այդ ժամանակամիջոցում կարողացան ավարտել ճաշարանը գործարանի բակում: Մի լուսավոր, մեծ ճաշարան: Միանգամից նա 600 մարդ եր տեղավորում:

Հյուրեցում յերբեք ալդպիսի ճաշարան չի յեղել Յեզ  
վոչվոք առանձնապես չեր հավատում նրան:

Իսկ յերբ ավարտեցին և բաց արին ճաշարանը,  
և ամեն մեկը տեսավ սպիտակ, մաքուր պատեր, մեծ  
լուսամուտներ, փոքրիկ սեղաններ, և վոր գլխավորն  
է, խոշոր, փայլուն կոնքեր խոհանոցում, ամենքն ել  
հասկացան, թե ինչ վոր նոր բան ե տեղի ունեցել:

Յեզ ուրախությունից, թե շուտով փոփոխություն  
կլինի, ինչ վոր մի տեսակ զվարթություն տիրեց գոր-  
ծարանում:

Այդ կիսամբակում բաժինները լուս անցկացրին,  
վոր առաջ յերբեք չեր յեղել:

Դրեցին ամերիկական նոր «կոմպրեսոր», վորն  
ավելի արագ պտտեցրեց մեքենաներն ու դազգահները  
և միանգամից պակասեցրեց կանգառումները:

Ամեն որ լիքն եր յեկող նորություններով և  
նախապատրաստությամբ:

Վերատեսուչ Բելիկովի առանձնասենյակում ան-  
ընդհատ զնդզնդում եր հեռախոսը, ներս ելին վազում  
բանվորները:

— Սերգեյ Ալեքսանդրովիչ, «կոմպրեսորի» վեր-  
ջին մասերն յեկան:

— Սերգեյ Ալեքսանդրովիչ, 32-րդ բաժնի դադ-  
դահն յեկալ:

Վերատեսչի սեղանի վրա դիզված են զեկու-  
ցումներ, թվեր: Նրա փոքրիկ առանձնասենյակն այդ  
որերում գործարանի կենտրոնն եր: Հանաք բան չե,  
թե ինչպիսի պատասխանատվություն ե ընկնում նրա  
վրա, վորին բանվոր դասակարգը գործարանի կառա-  
վարչությունն և հանձնել:

— Բայց, վոչինչ, զլուխ կըերենք, — չե վհատ-վում վերատեսուչը:

Բայց ահա վրա հասավ ֆարբիկալի 7 ժամվա աշխատանքի անցնելու որը: Այդ մարտի 31-ն եր: Լու-բերցում վաղուց այդպիսի մեծ տոնն չեր յեղել: Վա-ղուց արդքան մարդ չեր յեղել ժողովում շենքի դահ-լիճում, վորը յերբեմն գլուղատնտեսականն մեքենանե-րի պահեստ եր: Յեկան բոլոր չորս հազար բանվոր-ներն իրենց կանանց և յերեխաների հետ: Դահլիճում անհամբերների ժխոր, վորոնք ձախնի յեն սպասում: Ամենքն շտապում են այնտեղ, վորտեղ ամբիոնից Մո-լոտով խոսում ե, պարզ, հասկանալի լեզվով.

— Մենք պետք ե այս տարի ավելի շատ մեքե-նաներ բաց թողնենք... իրագործենք հսկայական շի-նարարությունը ԽՍՀՄ-ում: Հետամնաց յերկրից մենք պետք ե գոռնանք արդյունաբերական յերկիր: Մեր տոջե մեծ դժվարություններ են կանգնած — իրագոր-ծել արտադրական ծրագիրը, իջեցնել ինքնարժեքը, բարելավել ձեր աշխատանքը, ամեն մի պտուտակն իր տեղը դնել բարձրացնել աշխատանքալին դիսցիպլի-նան:

Զերմ, անկեղծ են 20-րդ բաժնի բանվոր Զիրկո-վի պատասխանի խոսքերը:

— Մենք զիտենք այդ ուղին և նրանով կդնանք: Մենք կտանք հարյուրավոր և հազարավոր նոր խոտհար-ներ, հնձող մեքենաներ, խրձկապներ: Մենք կբարձ-րացնենք աշխատանքալին դիսցիպլինան: Մենք կբա-րելավենք մեր աշխատանքը:

Նրա խոսքերը ծածկող ծափահարությունները հաստատությունն են այն բանի, թե բոլոր ասված-ները կկատարվեն:

Հետեւալ որը — ապօբիլի մեկն ե:

Առավոտյան ժամը 7-ին բոլորը դադարահների մոտն են: Գործալիքներ չկանու 52-րդ բաժնում՝ նորման բարձրացված ե, 34-րդում՝ նույնպես: Ամբողջ հակաբական մեխանիզմն, ինչպես լարված ժամացուց, աշխատում ե պարզ, առանց անկանոն զարկերի:

Տամքարություններում իրաը հանդիպելիս՝ առաջին հարցը՝

— Ի՞նչպես ե աշխատանքը:

— Լավ ե, շատ լավ...

Բառերի մեջ վոչ միայն ուրախություն ե լսվում, այլև զարմանք:

— Գործարանը լերենք այնպես չի աշխատել, ինչպես ալֆմ...

— Այլպիսի աշխատանքով ինքնարժեքն 9 տոկոսով իջեցնելը դժվար բան չե: — Այդ ընդունում ե գործարանի վերատեսուչ հելլիովը: Նա հին բանվոր ե, լավ ե ճանաչում իր գործարանը, բայց այս նորակերպ աշխատանքը նրան ել ե հափշտակում և աղշեցնում:

Նրանում ել առկայծում ե մի անհանգիստ միտքեւ հանկարծ, յեթե՝ այդ միայն առաջին որն ե: Չե վոր բանվորական ժամանակը մի ժամով կրնատվեց, և, բնականաբար, բանվորն ավելի քիչ բան պիտի տա:

Այդպիսի լարվածություն կոպահվի՝ աշխատանքի մեջ:

Բայց որերն անցնում ելին և իրենց հետը ընդում շարունակ ավելի ու ավելի ապշեցուցիչ նորություններ:

Վերատեսչի սենյակում ստացվել եր մի կտոր Մասսան. մրցութ. — 3

թուղթ, վորտեղ ծուռումուռ, անհավասար տառերով դրված ելին անմոռանալի խոսքերը ԶԲ վոր գեռ վազուց չե, յերկու ամիս առաջ, վործարանի բանվորներն ամեն մի ժողովում գնահատումները բարձրացնելու խնդիր ելին գնում: Յեզ հանկարծ 7-ժամկարանվորական որն յեկայի և բանվորներից դուրս քաշեց նոր խոսքեր.

— «Խնդրում եմ Ա—152 պտուտակների դնահատումն իջեցնել, վրովինեաև նրանց գնահատությունը շատ բարձր և սահմանված—15 կոտեկ 100 հատին: Խնդրում եմ 9 կոտեկ նշանակել, վորովինեաև աշխատանքի ժամանակ նրանք բոլոր պտուտակներից ավելի հեշտ են քարթվում և շատ:

Զելինով, բանվոր Ն 3406»:

Զելինովը, քսան տարեկան կոմիերիտական, դեռ միայն վեց ամիս առաջ 34-րդ բաժնի շեմքը կոխած, առաջինն յեղափ, վոր ողահանջեց իր աշխատանքի գնահատումն իջեցնել: Այդ սկիզբն եր: Հետո ճառաված թղթիկներ նման խնդիրներով դուրս քշեցին ուրիշ թղթեր վերատեսչի սեղանից: Կուտիրկին, Մակուշին, Ախոսսկի, Պիկին, Ռյազանցի, Լիտվինով, Ֆեղին, Սինև: Նրանք առաջիններն յեղան, վոր խոսք բացին իրենց աշխատանքի գնահատումների իջեցման մասին:

Համքարությունից գալիս ելին նորանոր լուրեր: Հեռախոսով, ծառաշության ցուցակներում, չոր ու կարճ, հաղորդվում եր:

... № 5520 բանվորը, Բոդրանովը, դանակները շտկելու գործում բարձրացրեց լարվածությունը—8 ժամում շինում եր 120 հատ, իսկ 7 ժամում շինում է 124 հատ: № 5559 բանվոր Զուրյուսինը դանակներ

սարքելու գործում 8 ժամում շինում եր 100 հատ,  
իսկ 7 ժամում շինում ե 105 հատ...

Այդպիս եյին աշխատում վոչ միայն առանձին  
բանվորները, այլ ամբողջ խմբեր, բրիգադներ, ամ-  
բողջ կոլեկտիվը:

36-րդ բաժնում, վորտեղ խոտհար մեքենաների  
շրջանակներն են հավաքվում, առաջին հերթափոխու-  
թյունը 8-ժամյա աշխատանքի սովորական 120 հատի  
փոխարեն հավաքեց 130 հատ: Բայց չորս հատը խո-  
տան զուրս յեկան: Յերկրորդ հերթափոխությունը  
130 հատ տվեց առանց խոտանի: Յերկրորդ հերթա-  
փոխությունը 8-ժամյա աշխատանքի 65 «Նով» խոտ-  
հարի փոխարեն տվեց 70 խոտհար առանց խոտանի:

Նույն որը գործարանում, համքարություններում  
կիսված եյին գործարանի վարչության, բջիջի, կոմի-  
տելիի, վարիչի թերթիկները:

... «Նով» խոտհարները հավաքելում առաջադեմ  
հանդիսացան ը. ը. Յեպիշինը, Բալովը, Շիրայենը:

... «Նովի իդեալ» խոտհարների հավաքման մեջ  
առաջիններն եյին ը. ը. Ժեղլովը, Բելյակովը, Բոր-  
դաչյովը, Բուլայենը, Բալխարյանը... 120 մեքենայի  
փոխարեն բաց թողին 126:

... «Նոր իդեալ» մեքենաների բանվոր-հավաքա-  
րարները մրցության են հրավիրում կարուսելային  
հավաքարանների բոլոր աշխատավորներին... բոլոր  
բանվորներին:

Շարունակ նորանոր լուրեր՝ համքարություն-  
ներից: Աշխատանքը չի թուլանում: Այս ամբողջ ժա-  
մանակի ընթացքում, վոր գործարանը 7 ժամվա յե  
անցել, վոչ մի հայտարարություն չի մտել ԳԿՀ (PRK):  
Ծխարաններում—վոչվոք:

36-րդ բաժնում յերկու սրող 13 բոպե ուշացել ելին, վորոնցից կախված եր կոլլեկտիվի աշխատանքը Բանվորներն իրենք պահանջեցին՝

— Մե տախտակի վրա նրանց:

— Կոլլեկտիվը չի կարող սպասել

Յեվ այդպիս, սրողներին ցուցադրեցին սև տախտակի վրա։ Պարզ ե, վոր Ել չի կրկնվի։

7 ժամվան անցնելը մի ինչ-վոր նոր, առանձնահատուկ տրամադրություն տուած բերեց բանվորների մեջ։ Ամեն ինչ պարզ ու հասկանալի յե թվում։ Յերբ հարցնում ես Զելենովին, թե ինչու նա հայտարարություն տվեց գնահատությունն իջեցնելու մասին, նա շփոթվում ե, և նրա կլորակ, ջանել գեմքին մի ժպիտ ե սահում։

— Բայց չի վոր Ի—152 պատուակները բոլորից հեշտ են քարթվում, նորման յիս կզնեմ, նույնիսկ ավելի կզնեմ, — և նա տխկացնում ե իր գաղղահին, ինչպես բարի խողյակինն իր լավ ձիուն, իր կերակրողին։

— Դաղգլահին յիս ընտելացել եմ, կարգի յեմ բերում այն, տեսնեմ ես ինչպես մաքուր եւ— Նա սեղմում ե գաղցյահի վոտը— Նայիր, վոտներն ինչպես են գնում։ կարծես կենդանի լինեն։

Գնահատումներն իջեցնելու հարցումը չի շփոթում նրանց, վորոնց գուշ տալիս եք։ Ամենքի համար այդ պարզ ե և հասկանալի, և նրանց արածն երենց թվում ե սովորական բան։ Մեկ պատասխան կա։

— Ծնաելացել հարմարեցրել ենք գաղցյահները.. նորմայից ավելին կատանք։ Պետք ե Ել ավելի և եժան

մեքենաներ տալի Իսկ ել ով կարող ե այդ բանն անել  
լիթե վոչ մենք ինքներս:

Դործարանում ալսալիսի գեղար ել պատահեց:

Բանվորը խնդրում է իր աշխատավարձի մեկ  
տոկոսը վերցնել ինքնարժեքի իշխման համար։ Դոր-  
ծարանի վարչությունն այդ բանին չհամաձայնեց,  
բայց այդ հայտարարությունը մի փոքրիկ հատկա-  
նշականն և այն նորի, ինչ վոր ծագել է զործարանում։  
Այժմ զործարանը մրցման մեջ և մտել կրամատորսկիրի  
հետ Նույնիսկ դժվար և պատկերացնել թե ինչ աս-  
տիճանի կարող և հասնել բանվորների վողեորու-  
թյունը, լիթե արդեն 7 ժամի անցնելն այդպիս թափ-  
տվեց նրանց։ Լուրերեցկու բանվորները բանվորա-  
կան զորասյունի առաջին շարքերումը կանդնեցին և  
վստահ քայլում են սոցիալիզմի շինարարության ճա-  
նապարհով։

## ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ՀՆՁԻՐ, ՆՈՐ ԳՅՈՒՂԻ ԶԱՅՆ

Մըցությունը լայնորեն տարածվելով քաղաքում,  
անցավ գյուղը։ Այդ մասին աղաղակում են բոլոր  
լրագրերը։

Յուրաքանչյուր որ ուրախ լուր և բերում։ Ամեն  
ծայրից գյուղացիների արձագանքներն են գալիս։ Ա-  
հա մի շարք փաստեր, վոր այդ են ապացուցում։

Վատկան կոչ արեց Կոստրոմային։ Կոստրոման  
հրավերն ընդունեց և իր բոլոր ուժերը հավաքելով,  
հրավիրեց Յարոսլավին և Իվանովո-Վոլոնեսինսկուն։

Մերձվոլգան, Հյուսիսային Կովկասը և Ռուսայի-  
նան մրցում են իրար հետ լավագույն արշավը տա-  
նելու բերքի համար, կոլլեկտիվացման համար։

Սամարայի գյուղատնտեսական արհեստանոցները մրցության են հրավիրում Վլադիմիրովկա գյուղի դյուղացիներին և «Զելզոնայտ Բոշչա» կոլտնտեսությանը:

Բանվորները պարտականություն հանձն առան աշխատանքի արտադրողականությունը բարձրացնել մեկ տոկոսով, իջնցնել ինքնարժեքը և բարելավել աշխատանքի վորակը:

Գյուղացիներն, իրենց հերթին, խոստանում են կտտարել ադրոմինիմումը\*), կոլտնտեսություն կաղմակերպել, հողը մաքրատեսակ սերմիրով ցանել:

Ահա զյուղացիների վօրոշումը ադրոմինիմումի կտտարման վերաբերությամբ:

— Մենք, Վլադիմիրովկա գյուղի քաղաքացիներս ընդհանուր ժողովում քննության առնելով բերքատվության բարձրացման խնդիրը մեր գյուղում, կարծում ենք, վոր բերքատվությունը բարձրացնել կարող ենք միայն այն դեպքում, ինթե ամբողջ գյուղով մեզ մատչելի մի շարք միջոցներ ձեռք առնենք, վոր մենք թվում ենք ներքեում:

Այդ միջոցները մեզ շատ ուղուած կբերեն, բայց այն ժամանակ միայն, յերբ մեր գյուղի ամբողջ տընտեսությունը կկերպելի նրանց:

Ինկատի ունենալով, վոր քաղաքացիների մեծամասնությունն այդ միջոցները ձեռնարկելու կողմանից ե, մենք վորոշում ենք կինսապործել նրանց՝ բոլոր անտեսությունների համար պարտադիր կարգով:

\* ) Ադրոմինիմումը — գյուղատնտեսի առնապարզ մինիմալ ցուցմունքները, վորոնք նպաստելու յեն բերքատվության բարձրացմանը:

Ներկա դարնանից մեր տնտեսությունները պարագավոր են՝

1. վերացնել միջնակները.
2. հեռացնել վարելահողերից և մարդագետիններից ծառաբներն ու մացառները.
3. մաքրել մարդագետինները դարնանալին լիցքերից.
4. դադարեցնել անասուններ արածացնելը վողողված ցածրավայր մարդագետիններում վաղ դարնանը.
5. ցաքանել վողողված, սիկակալված մարդագետինները.
6. դադարեցնել անասուններ արածացնելը աշնացաններում.
7. ժամանակին հնձել-մաքրել դաշտային ճանապարհները, սահմանագծային սինոռներն ու առուները՝ վսասատուների և աղբարսուկների դեմ պայքարելու համար.
8. միայն մաքրած սերմեր ցանել և ախտահանել նրանց.
9. վոչնչացնել դաշտալին մկներին.
10. հերկը վաղաժամ շուռ տալ մացնել զբաղված հարուներ, դադարեցնել արածեցնելը հերկաշերտում.
11. կիրարկել շաքարալին ցանք.
12. քաղհանել բոլոր ցանքերը, քաղհանել կարտոֆիլը և բուկերը լցնել, այդպես ել բոլոր հերկացան կուլտուրանները.
13. կանոնավոր բաղմադաշտյան ցանքափոխության անցնել.

14. Ժամանակին և ամբողջովին ազըս դաշտը տանել.

15. Վոչ մի տնտեսություն իրավունք չունի հրաժարվելու այս վորոշման կատարումից:

Այսպիս են արձականգում գլուղացիները բանվորների կանչին:

Կոստրոմայի կողմից հրավիրված Իվանովո-Վոզնեսենսկը բերքատվության արշավին վերաբերյալ մըցությունն անցկացնելու համար գյուղ և ուղարկում հինգ հարյուր կոմյերիտականներ, վորակյալ բանվորներ—փականագործներ, դարբիններ, ատաղագործներ:

Նիժնե-Սերեդսկայի Համէկթեմ կոլեկտիվը «Տըիում» սերմազտիչ գնեց գլուղացիներին հանձննելու համար:

Գլուղացիական լերիտասարդության Դանիլովսկականա գաղտնական (Շուկակի գաղտնա) շրջակա գյուղերում լայն ազիտացիա յե տանում հարյուրտոկոսյա սերմազտման և ուրիշ ազգունում իտական միջոցների համար Նման աշխատանք տանում են նաև Լուժուկայի գյուղացիական յերիտասարդության դպրոցը (Յուրենցկի գաղտնա):

Քաղաքային ֆաքրիկանների բջիջներն ազրոնում իտական ուժերով միացվում են գյուղերին՝ մըցության ամբողջ ժամանակի ընթացքում:

Ապրիլի 10-ին Ռույանովսկ քաղաքի բանվորների և գյուղացիների և Իվանովո-Վոզնեսենսկից լեկած ջուղիակների ընդհանուր ժողովում այսպիսի բանաձև ե կազմվել.

— Մենք, Ռույանովսկ քաղաքի բանվորներս ու գյուղացիներս, Իվանովո-Վոզնեսենսկի բանվորական-

բրիդաղների առաքման մեջ տեսնում ենք քաղաքի և  
գյուղի մշտական կտակի սկիզբը:

Իվանովսկիի ջուլհակների որինակին պետք և հե-  
տեն մլուս շրջանները:

Սոլոսկովիցիու գյուղացիները մրցության են  
կանչում Վերա Մլուցկալի անվան Փարբիկալի բան-  
վորներին:

Գյուղացիները պարտավորությունն հանձն առան  
ընդլայնել ցանքերի տարածությունը գյուղացիական  
տնտեսություններում՝ 15 տոկոսով, իսկ կողեւկտիվ  
տնտեսություններում՝ 25 տոկոսով և բերքատվությունը  
բարձրացնել գյուղացիական տնտեսություններում  
5 տոկոսով, իսկ կողեւկտիվ տնտեսություններում՝ 15  
տոկոսով:

Դոնբասսի Լուգանսկ քաղաքի բանվորները մըր-  
ցության կանչեցին կաղակներին: Պայմանագրին հա-  
մաձայն լնոնագործները պարտավորվում են մինչև  
տնտեսական տարվա վերջը ինքնարժեքն իջեցնել 7  
ուուր. 10 կոպ. մինչև 6 ուուր. 10 կոպ. ածուխի ամեն  
մի տոննին և առաջազրությունը բարձրացնել 10 տո-  
կոսով:

Աշխատավոր կտակները խոսք տվին բերքատը-  
վությունը բարձրացնել 7 տոկոսով, ցանքի տարածու-  
թյունն ընդլայնել 15 տոկոսով և, իբրումն, կազմակեր-  
պել յօթնոր կոլտնտեսություն: Պայմանագրին ստո-  
րագրված և «Պարիժսկայա Կոմմունա» հանգի բոլոր  
լեռնագործների և Լուգանսկի մարդի կաղակության  
աշխատավորական կողեւկտիվի կողմից:

Մըրցության արդյունքները ցույց տրվեցին շատ  
տեղերում արդեն մայիսի 1-ին: Այսպես, Լենինգրա-  
դում մայիսմեկան ցույցերին «Կրասնիյ Պուտիլովեց»  
մեքենաշինարարական գործարանն իր կոլոննայի առ-  
ջեց հանեց 18 նոր «Թորդգոլոն» տրակտոր: Չնայելով իր  
բոլոր դժվարություններին, միայն յերեկ եր, վոր նա  
կատարեց իր պայմանագրի առաջին կետը, ապրիլ ամ-  
սվա ընթացքում բաց թողնելով 301 տրակտոր: Լե-

Նինգըաղի մեխանիկական և 7 գործարանը առ 1-ի  
մալիսի ինքնարժեքն իջեցրեց 39 տոկոսով:

Կարլ Մարքսի անվան գործարանի բանվորներն  
իրենց աղբանքների արժեքը յերեք անգամ իջեցրին:

«Կրասնի արենուգոլնիկի» բանվորները խոստա-  
նում են ինքնարժեքն իջեցնել 5 տոկոսով, կառավա-  
րության առաջադրությունից դուրս:

Ողեսսալում սոցիալիստական մրցության շտաբը  
մայիսի 1-ին հանրադումարի բերեց յեզած նվաճում-  
ները: Յերեաց, վոր գլխավոր գեպօն աշխատանքի ար-  
տադրողականությունը բարձրացրել է 24 տոկոսով և  
վագոնների նորոգության ինքնարժեքն իջեցրել է 20  
տոկոսով:

Լենինի անվան մեքենաշինարարական գործարա-  
նը արտադրական ծրագիրը 20 տոկոս ավելիով և կա-  
ռարում:

Հոկաեմբերյան հեղափոխության անվան դութա-  
նի գործարանն առաջիկա 135 դութանի փոխարեն բաց  
և թողնում 150 դութան:

Մահուդի ֆարբիկայում արտադրողականությունը  
բարձրացրեցին 10 տոկոսով:

Այս բոլոր նվաճումները վկայում են, վոր մրցու-  
թյունը հաջող և ընթանում: Բանվորները կատարում  
են իրենց պայմանագրերը:

Բանվորները հաստատապես գիտեն, թե իրենք՝ ինչ  
հիվանդ կողմերին պետք է խփեն: Այդ ոգնում և սո-  
ցիալիստական մրցության հաջող ընթացքին:

Գյուղական տնտեսության գործը մեղանում այս-  
պես և դրված: ԽՍՀՄ կ. դ. 4-րդ սեսսիայում բերքա-  
տվության բարձրացման մասին գիլդիատ ընդունվեց:  
Դեկտեմբեր մի շարք միջոցներ նշեց, վորոնք առաջիկա  
հնդամյակում բերքատվությունը պետք և բարձրացնեն  
30--35 տոկոսով, այսինքն 24.590 տոնն ավելացում  
պետք և տան:

Միանգամայն պարզ և, վոր մեր բերքի մակար-  
դակը շատ ցածր և վոչ միայն խորհրդային լերկը:

համար, այլև վորեն կապիտալիստական յերկրի համար։ Մեղանում այօմ միջին բերքատվությունը զբուղացիական առանձին տնտեսության մեջ հավասար ե 3/4 տոննի մեկ հեկտարից, մինչդեռ Գերմանիայում դաշտերն այդպիսի բերքատվություն ունեցին 200 տարի առաջ։ 100 տարի առաջ Գերմանիայում հեկտարը՝ որինակ, տալիս եր մեկ տոնն, իսկ մենք խնդիր ենք որել այդքանի հասցնել միայն 5 տարուց հետո։ Ռւրիմն, մենք պետք ե 5 տարվա ընթացքում 6 անգամ առաջ անցնենք բերքատվության աճումից, վարը գոյություն ուներ մինչև պատերազմը, վորովհետեւ նա մեկ տոկոսով ել չեր բարձրացնում, իսկ մենք ուզում ենք դաշտերի բերքատվությունն ամեն տարի բարձրացնել 6 տոկոսով։

Կկարողանանք մենք դլուխ բերել և կյանք մըտցընել կանխանշված ծրապիրը։

Կկարողանանք, յեթե մեր տնտեսություններն աստիճանաբար կվերածվեն ավելի խոշոր տնտեսությունների, յեթե դյուլացին հասկանա, վոր այդ անհրաժեշտ ե, և մասնակցի մրցությանը՝ հնդամբա պլանն իրագործելու համար։


Սակայն պետք ե հասկանալ, վոր առանց չքավոր և միջակ գյուղացիության ակտիվության և ինքնառողջունելության՝ բերքատվության բարձրացման խնդրի շուրջը, մենք վոչինչ ել ձեռք չենք բերի։

Շարունակելով հարձակումը կուլակի վրա, գյուղացիները՝ բանվորների հետ ձեռք-ձեռքի տված, պետք ե մրցության ճանապարհով անցնեն բերքատվության մինչպատերազմյան ցարիզմի ժամանակվա խայտառակ նորմալից, գուրս քշեն մեր գյուղատնտեսության հետամնացությունը, ապահովին նրան մեքենաներով և հաստատուն քայլերով գնան դեպի սոցիալիզմ։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

1. Ի. Ստալին.—Առաջարան . . . . .	3
2. Լենինը մըցության մասին . . . . .	9
3. Կոմինբիտական բրիգադից գեղի մասսաների պայմանագիրը . . . . .	12
4. Առաջին նշանաձիգները . . . . .	14
5. Գեծ-ականների մոտ . . . . .	16
6. Եժան և ամուր կրկնակոշիկներ տանք . .	21
7. Հազարավոր պրոլետարների պայմանագիր .	29
8. «Պրոլետարկան» մըցության մեջ . . . .	40
9. Գյուղը հրավիրեց—ամրացեք, աղերք . .	48
10. «Զարյադիե» ֆաբրիկան . . . . .	52
11. Ել ավելի մեջենաներ բաց թողնենք զբուղին	61
12. Ավելի բարձր հնչիր, նոր զբուղի ձայն . .	69



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0039055

(164)

A I  
4474

Е. Микулова

# Соревнование масс



9160 15 4.